



ISSN 0366-5119

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
BIOLOGICAL JOURNAL OF ARMENIA

2019



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
BIOLOGICAL JOURNAL OF ARMENIA

ՀԱՏՈՐ LXXI, 2, 2019

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

Լույս է տեսնում 1948 թվականից, հոդվածները հրատարակվում են հայերեն,
ռուսերեն կամ անգլերեն լեզուներով

Выходит с 1948 года, статьи публикуются на армянском, русском
или английском языках

Journal is published since 1948, the articles are published in Armenian,
Russian or English

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Է.Ս. Գևորգյան (*գլխավոր խմբագիր*), Ռ.Մ. Հարությունյան (*գլխավոր խմբագրի տեղակալ*), Ա.Հ. Եսայան (*պատասխանատու քարտուղար*), Գ.Գ. Գևորգյան, Ա.Հ. Թռչունյան, Լ.Ռ. Մանվելյան, Ս.Խ. Մայրապետյան, Ժ.Հ. Վարդանյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յու.Թ. Ալեքսանյան, Ժ.Ի. Հակոբյան, Վ.Պ. Հակոբյան,
Ս.Հ. Մովսիսյան, Գ.Հ. Փանոսյան, Լ.Լ. Օսիպյան

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Յ.Ս. Գևորգյան (*главный редактор*), Ռ.Մ. Արությունյան (*заместитель главного редактора*), Ա.Գ. Եսայան (*ответственный секретарь*), Գ. Գ. Գևորգյան, Ա.Ա. Թրչունյան, Լ.Ր. Մանվելյան, Ս.Խ. Մայրապետյան, Զ.Ա. Վարդանյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Ю.Т. Алексанян, Ж.И. Акопян, В.П. Акопян,
С.О. Мовсесян, Г.А. Паносян, Л.Л. Осипян

THE EDITORIAL BOARD

Editor in chief: E.S. Gevorgyan, *Vice-editor:* R.M. Aroutiunian,
Secretary-in-charge: A.H. Yesayan, *Members of the Board:* G.G. Gevorgyan,
A.H. Trchounian, L.R. Manvelyan, S.Kh. Mayrapetyan, Zh.H. Vardanyan.

THE EDITORIAL COUNCIL

Yu.T. Aleksanyan, Zh.I. Hakobyan, V.P. Hakobyan,
S.H. Movsesyan, G.H. Panosyan, L.L. Osipyanyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• Փորձարարական և տեսական հոդվածներ •

Վարդանյան Յ.Ս., Ղուկասյան Է.Խ., Կոբեյան Յ.Յ. Սևանա լճի ջրիավաք ավազանի գետերի ջրերի որակի գնահատումն ըստ մանրէաբանական ցուցանիշների.....	6
Մինասյան Ս.Ս., Աղաբաբյան Ծ.Բ., Գևորգյան Է.Ս., Ղուկասյան, Լ.Է. Կեղևի տարբեր գոտիների կարգավորիչ ազդեցության առանձնահատկությունները Դեյտերոսի անդաստակային կորիզի նեյրոնային ակտիվության վրա.....	12
Սարգսյան Ս.Ա. Սեստոնում ԱԵՖ քանակությունը և դանդաղեցված ֆյուլուրեցենցիայի մեծությունը որպես Սևանա լճի պլանկտոնի կենսազանգվածի և բաշխվածության չափման էքսպրես ինդիկատորներ.....	17
Նաղաշյան Յ.Զ., Հակոբյան Ա.Ռ., Գրիգորյան Լ.Յ., Երիբեկյան Ս.Վ., Սամսոնյան Վ.Լ. Տավարի մոնիթինգի բնկումների կանխատեսումը Տավուշի և Կոտայքի մարզերում	22
Ղազարյան Կ.Ա. Պղնձով և մոլիբդենով աղտոտված հողերում աճող <i>Artemisia vulgaris</i> և <i>Medicago coerulea</i> բուսատեսակների ֆիտոէքստրակցիայի ներուժի բացահայտումը.....	26
Սարգսյան Յ.Պ., Բաղդասարյան Ն.Ս., Սարգսյան Ա.Յ. Իոնիզացնող ճառագայթի ազդեցության դեբում էրիթրոցիտների չափերի փոփոխության հնարավոր մեխանիզմները	33
Վարդանյան Տ.Վ., Բարսեղյան Ն.Է., Աղաբաբյան Ա.Լ. Սևանա լճի և Իսիկ Կուլ լճի Սևանի իշխանի որոշ ձևաչափական և պլաստիկ ցուցանիշների համեմատական վերլուծությունը.....	37
Կտրակյան Ս.Ա. Երևանի կանաչ տնկարկների դենդրոբազմազանությունը.....	43
Պարոնյան Զ.Խ., Գրիգորյան Լ.Ս., Ստեփանյան Ա.Ա., Սրապիոնյան Ռ.Ս. Հիպոթալամուսի պրոլինոլ հարուստ պեպտիդ GX-NH ₂ -ի ազդեցությունը առնետի արյան պլազմայի ֆիբրինոլիտիկ ակտիվության վրա.....	48
Համբարձումյան Ե.Ռ., Ս. Գինոսյան Վ., Տիրացույան Ս.Գ. Մալարիայի դեմ օգտագործվող դեղամիջոցների հակամիլիդային ներուժի գնահատումը մոլեկուլային մոդելավորման մեթոդների կիրառմամբ.....	52
Թերլեմեզյան Յ.Լ., Մկրտչյան Յ.Ն. Բրոկոլիի վնասատուների տեսակային կազմը Արարատյան հարթավայրի պայմաններում.....	58
Խաչատրյան Ն.Խ. Ամիդների փոխանակության ուղիները ենթաստամոքսային գեղձում.....	62
Միրզոյան Ս.Ն. H ₂ -ի արտադրությունը և հիդրոգենազների դերը <i>Escherichia coli</i> -ում գլիցերոլի և քացախաթթվի խառնուրդների խմորման ընթացքում տարբեր pH-ներում.....	66

СОДЕРЖАНИЕ

•Экспериментальные и теоретические статьи•

<i>Вардадян Г.С., Гукасян Э.Х., Кобелян Р.О.</i> Оценка качества воды рек водосборного озера Севан по микробиологическим показателям.....	6
<i>Минасян С.М., Адамян Ц.И., Геворгян Э.С., Гукасян Л.Э.</i> Особенности корректирующего влияния различных областей коры на нейрональную активность вестибулярного ядра Дейтерса.....	12
<i>Саргсян С.А.</i> Количество АТФ сестона и уровень замедленной флюоресценции как экспрессные индикаторы измерения биомассы и распределения планктона озера Севан	17
<i>Нагасян О.З., Акопян А.Р., Григорян Л.Г., Ерибекян С.В., Самсомян М.Л.</i> Прогнозирование вспышек мониезиоза крупного рогатого скота в Тавушской и Котайской областях	22
<i>Казарян К.А.</i> Выявление фитоэкстракционного потенциала <i>Artemisia vulgaris</i> и <i>Medicago coerulea</i> , растущих в почвах, загрязненных медью и молибденом.....	26
<i>Саркисян Г.П., Багдасарян Н.С., Саркисян А.Г.</i> О возможных механизмах изменения размеров эритроцитов при воздействии ионизирующего излучения.....	33
<i>Вардадян Т.В., Барсегян Н.Э., Агасян А.Л.</i> Сравнительный анализ некоторых морфометрических и пластических признаков севанской форели из озера Иссык-Куль и озера Севан	37
<i>Ктракян С.А.</i> Дендроразнообразие зеленых насаждений Еревана.....	43
<i>Паронян З.Х., Григорян Л.С., Степанян А.А., Срапионян Р.М.</i> Влияние гипоталамического пролином богатого пептида GX-NH ₂ на фибринолитическую активность плазмы крови крыс.....	48
<i>Амбарцумян Е.Р., Гиносян С.В., Тирацумян С.Г.</i> Оценка терапевтического потенциала антималярийных препаратов как ингибиторов β -амилоида методами молекулярного моделирования.....	52
<i>Терлемезян Г.Л., Мкртчян А.Н.</i> Видовой состав вредителей брокколи в условиях Араратской равнины.....	58
<i>Хачатрян Н.Х.</i> Пути обмена амидов в поджелудочной железе.....	62
<i>Мирзоян С.Н.</i> Производство H ₂ и роль гидрогеназ в периодических культурах у <i>Escherichia coli</i> при ферментации смеси глицерона и ацетата при различных рН.....	66

CONTENTS

•Experimental and theoretical articles•

<i>Vardanyan H.S., Ghukasyan E.Kh., Kobelyan H.H.</i> Water quality assessment of the rivers of Lake Sevan basin on the microbiological indices.....	6
<i>Minasyan S.M., Adamyan Ts.I., Gevorgyan E.S., Ghukasyan L.E.</i> Features of the corrective influence of various areas of the cortex on the neuronal activity of the Deiters's lateral vestibular ucleus.....	12
<i>Sargsyan S.A.</i> The amount of ATP the seston and delayed fluorescence level as rapid indicators for measuring the biomass and distribution of plankton of lake Sevan.....	17
<i>Naghashyan H.Z., Hakobyan A.R., Grigoryan L.H., Eribekyan S.V., Samsonyan V.L.</i> Prevention of monesiosis borders in Tavush and Kotayk regions.....	22
<i>Ghazaryan K.A.</i> Detection of phytoextraction potential of <i>Artemisia vulgaris</i> and <i>Medicago coerulea</i> growing in soils polluted by copper and molybdenum.....	26
<i>Sargsyan H.P., Baghdasaryan N.S., Sargsyan A.H.</i> On the possible mechanisms of the changes in erythrocyte sizes upon the impact of ionizing raddiation.....	33
<i>Vardanyan T.V., Barseghyan N.E., Aghasyan A.L.</i> Comparative analysis of some morph-metric and plastic parameters of Sevan trout from the lakes Issyk-Kul and Sevan	37
<i>Ktrakyan S.A.</i> Dendro-diversity of the green stands of Yerevan	43
<i>Paronyan Z.Kh., Grigoryan L.S., Stepanyan H.A., Srapionyan R.M.</i> Influence of hypothalamic proline-rich peptide GX-NH ₂ on fibrinolytic activity of rat blood plasma.....	48
<i>Hambardzumyan Y.R., Ginosyan S.V., Tiratsuyan S.G.</i> Assessment of the therapeutic potential of anti-malarial drugs as β -amyloid inhibitors using molecular modeling methods.....	52
<i>Terlemezyan H.L., Mkrtychyan H.N.</i> Species composition of broccoli pests in Ararat valley.....	58
<i>Khachatryan N.Kh.</i> Pathways of amids metabolism in pancreas.....	62
<i>Mirzoyan S.N.</i> H ₂ production and role of hydrogenases in <i>Escherichia coli</i> batch cultures during fermentation of mixture of glycerol and acetate at different pHs.....	66



Հայաստանի կենսաբ. հանդես, 2 (71), 2019

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ԳԵՏԵՐԻ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԸՍՏ ՄԱՆՐԵԱՔԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ

Հ.Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ¹, Է.Խ. ՂՈՒԿԱՍՅԱՆ², Հ.Հ. ԿՈՔԵԼՅԱՆ

¹ Սևան ազգային պարկ ՊՕԱԿ, 1501, ք. Սևան

² ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի
Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ, 0014, ք. Երևան
hripsimekobelyan@mail.ru

2018 թ. Գավառագետ, Մասրիկ, Արգիճի և Լիճք գետերի տարբեր դիտակետերում իրականացվել են մանրէաբանական և հիդրոբիոլոգիական ուսումնասիրություններ: Մանրէաբանական ցուցանիշների հիման վրա կատարվել է գետի ջրի որակի գնահատում: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ուսումնասիրված գետերը կոմունալ կենցաղային հոսքաջրերով առավել աղտոտված են գետերի միջին և ստորին հոսանքներում:

Սապրոֆիտ բակտերիաներ – կոլի-ինդեքս – ջրի որակ

В 2018 г. были проведены микробиологические исследования на разных станциях рек Гаварагет, Масрик, Аргичи и Личк. На основе количества сапрофитных бактерий проведена оценка качества речной воды. Результаты исследования показали, что изучаемые реки загрязнены коммунально-бытовыми сточными водами в среднем и нижнем течении.

Сапрофитные бактерии – коли-индекс – качество воды

The microbiological and hydrochemical investigations at the different sampling stations of the Rivers Gavaraget, Masrik, Argichi and Lichq have been conducted in 2018. Based on the microbiological indexes an assessment of the water quality has been conducted. According to the results, the middle and lower reaches of rivers were more polluted by municipal wastewater.

Saprophytic bacteria – coli-index – water quality

Սևանա լիճը, որը Հարավային Կովկասի քաղցրահամ ջրի խոշորագույն աղբյուրն է, ենթարկվում է հզոր մարդածին ազդեցության: Թեպետ վերջին տարիներին սահմանափակվել են լիճ լցվող արտադրական հոսքաջրերը, կառուցվել են կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայաններ՝ Մարտունի, Գավառ և Վարդենիս համայնքներում, այնուհանդերձ ջրի վաճառքի ավազանից լիճ ներթափանցող ֆեկալ-կենցաղային հոսքի ծավալը եապես չի նվազել:

Լճային համակարգի վրա ջրի վաճառքի ավազանը հիմնականում ազդում է գետային հոսքի միջոցով, ուստի հրատապ են դառնում լիճ թափվող գետերի ջրերի հիդրոբիոլոգիական, հիդրոկենսաբանական՝ այդ թվում նաև մանրէաբանական մոնիտորինգային ուսումնասիրությունները:

Առաջին անգամ Սևանա լիճ թափվող գետերում մանրէաբանական ուսումնասիրություններ կատարվել են Ղամբարյանի կողմից [5]: Պարզվել է, որ 1956-1957թթ. սապրոֆիտ մանրէների թվաքանակը Մասրիկի, Մաթենիսի և Գավառագետի գետա-

բերանների ջրերում համապատասխանաբար կազմել է 750, 1300 և 1380 ԳԱՄ/մլ: Վերջին 10 տարիների ընթացքում թվաքանակն ավելացել է 5-10 անգամ [9]: Պարբերաբար Սևանա լիճ թափվող գետերի մանրէաբանական ուսումնասիրությունները կատարվել են Մինասյանի [1], և Վարդանյանի [2] կողմից: Պարզվել է, որ ըստ մանրէաբանական ցուցանիշների առավել աղտոտված են Գավառագետ, Դրախտիկ, Ծակաբար և Մարտունի գետերի գետաբերանային հատվածները:

Աշխատանքի նպատակն է Սևանա լիճ թափվող գետերի աղտոտվածության գնահատումը ըստ մանրէաբանական ցուցանիշների:

Նյութ և մեթոդ: Զիդրոնկոհամակարգ ներմուծված ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի ազդեցության գնահատման հիմնական ցուցանիշ են ընտրվել սապրոֆիտ մանրէների և աղիքային ցուպիկների քանակը [6, 11]: Միաժամանակ ուսումնասիրվել են խմորասնկերի և բորբոսասնկերի քանակները, ինչպես նաև ջրում լուծված թթվածնի և օրգանական նյութի (պերմանգանատային օքսիդացում) պարունակությունը:

Աշխատանքի համար փորձանյութ են հանդիսացել 2018 թ. մայիս, հուլիս, օգոստոս ամիսներին Սևանա լիճ թափվող 4 գետերի (Գավառագետ, Մասրիկ, Արգիճի, Լիճք) տարբեր հատվածներից վերցված փորձանմուշները:

Սապրոֆիտ մանրէների թվաքանակը որոշվել է 20°C-ում և 37°C-ում չոր սննդային ագարից պատրաստված սննդամիջավայրում աճի համապատասխան երկրորդ և մեկ օրվա հաշվում, իսկ կոլի-ինդեքսը (լակտոզադրական աղիքային ցուպիկների քանակը 1 լ ջրում)՝ մեմբրանային գտման եղանակով [7]: Բորբոսասնկերի որոշման համար օգտագործվել է Չապեկի սննդամիջավայրը [8]: Խմորասնկերի թվաքանակը որոշվել է թաղցուից պատրաստված ագարային սննդամիջավայրում՝ մեմբրանային գտման եղանակով [10]: Արդյունքները արտահայտվել են գաղութ առաջացնող միավորների թվով (ԳԱՄ): Ջրում լուծված թթվածնի պարունակությունը որոշվել է ըստ Վինկլերի, իսկ օրգանական նյութի պարունակությունը (պերմանգանատային օքսիդացում)՝ ըստ Կուբելի [3]:

Արդյունքներ և քննարկում:

Գետ Գավառագետ Ակունք – կատարված հետազոտությունների արդյունքներից պարզվել է, որ գետի ակունքի ջրերում 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը կազմել է համապատասխանաբար 1400 ԳԱՄ/մլ և 40 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,3 հազ. ԳԱՄ/լ: Խմորասնկերի և բորբոսասնկերի թվաքանակը կազմել է համապատասխանաբար 1100 ԳԱՄ/100մլ և 12 ԳԱՄ/մլ (աղ.1): Գետի ակունքի ջրերում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 10,4 մգ Օ₂/դմ³, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 2,24 մգ Օ/դմ³:

Աղյուսակ 1. Սապրոֆիտ մանրէների, խմորասնկերի, բորբոսասնկերի թվաքանակը և կոլի-ինդեքսը Գավառագետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հազ. ԳԱՄ/լ	Խմորասնկերի քանակ, ԳԱՄ/100մլ	Բորբոսասնկերի քանակ, ԳԱՄ/մլ
	20°C	37°C			
Ակունք	1400	40	0,3	1100	12
Նորատուս գյուղից վերև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ	10000	1200	80	1400	10
Գետաբերան	4450	520	50	600	19

Նորատուս գյուղից վերև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ – իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետը՝ հոսելով Գավառ քաղաքի և մի շարք գյուղերի միջով ենթարկվում է ֆեկալ-տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով աղտոտման: Դեռ ավելին, դիտակետից մոտ 300 մ վերև՝ Գավառ քաղաքի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արտահոսքերը լցվելով գետ էլ ավելի են մեծացնում մարդածին ճնշումը, ինչի արդյունքում դիտակետի ջրերում ակունքի համեմատ արձանագրվել է մանրէներով՝ հատկապես աղիքային ցուպիկներով աղտոտվածության բարձր մակարդակ: Այսպես, 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակը կազմել է համապատասխանաբար 10000 ԳԱՄ/մլ և 1200 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 80 հազ. ԳԱՄ/լ: Խմորասկերի քանակը կազմել է 1400 ԳԱՄ/100մլ, իսկ բորբոսասկերինը՝ 10 ԳԱՄ/մլ: Դիտակետի ջրերում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 10,9 մգ O₂/դմ³, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 2,1 մգ O/դմ³:

Գետաբերան – Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գետի ջուրը Նորատուսից դեպի գետաբերան 5,8 կմ հատվածում ենթարկվում է ինքնամաքման, ինչի արդյունքում մանրէների թվաքանակը նախորդ դիտակետի համեմատ նվազել է մոտ 2 անգամ (բացառությամբ բորբոսասկերի): Այսպես 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակը կազմել է համապատասխանաբար 4450 ԳԱՄ/մլ և 520 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 50 հազ. ԳԱՄ/լ: Խմորասկերի քանակը կազմել է 600 ԳԱՄ/100 մլ, իսկ բորբոսասկերինը՝ 19 ԳԱՄ/մլ:

Գետաբերանում նախորդ դիտակետի համեմատ լուծված թթվածնի և օրգանական նյութի պարունակությունը գրեթե չի փոխվել:

Գետ Մասրիկ

Ակունք – իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի ակունքի ջրերում 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 660 ԳԱՄ/մլ և 126 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 2,0 հազ. ԳԱՄ/լ: Խմորասկերի և բորբոսասկերի թվաքանակը համապատասխանաբար կազմել է 80 ԳԱՄ/100 մլ և 1 ԳԱՄ/մլ (աղ.2): Դիտակետում պերմանգանատային օքսիդացման արժեքը կազմել է 0,7մգO/դմ³:

Մասրիկ գյուղի կամրջի հարևանությամբ – գետը, հոսելով համանուն գյուղի տարածքով, աղտոտվում է ֆեկալ-կենցաղային և գյուղատնտեսական հոսքաջրերով, ինչպես նաև կենցաղային աղբով: Արդյունքում դիտակետի ջրերում ակունքի համեմատ արձանագրվել է մանրէների քանակական աճ, ինչպես նաև օրգանական նյութի պարունակության բարձրացում: Այսպես, 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 30000 ԳԱՄ/մլ և 3700 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 8,4 հազ. ԳԱՄ/լ: Խմորասկերի և բորբոսասկերի քանակը համապատասխանաբար կազմել է 900 ԳԱՄ/100 մլ և 16 ԳԱՄ/մլ:

Աղյուսակ 2. Սապրոֆիտ մանրէների, խմորասկերի, բորբոսասկերի քանակը և կոլի-ինդեքսը Մասրիկ գետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ բակտերիաների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հազ. ԳԱՄ/լ	Խմորասկերի թվաքանակ, ԳԱՄ /100մլ	Բորբոսասկերի թվաքանակ, ԳԱՄ/մլ
	20°C	37°C			
Ակունք	660	126	2,0	80	1
Մասրիկ գյուղից ներքև	30000	3700	8,4	900	16
Գետաբերան	19000	930	6,0	430	10

Պերմանգանատային օքսիդացման արժեքը կազմել է 3,0 մգ Օ/դմ³, իսկ լուծված թթվածնի պարունակությունը՝ 10,1 մգՕ₂/դմ³:

Գետաբերան – կատարված հետազոտությունների արդյունքում գետաբերանի ջրերում Նախորդ դիտակետի համեմատ արձանագրվել է հետազոտված մանրէների թվաքանակի և օրգանական նյութի պարունակության նվազում, ինչը պայմանավորված է գետի ջրերի ինքնամաքմամբ: Այսպես, 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 19000 ԳԱՄ/մլ և 930 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 6,0 հազ. ԳԱՄ/լ: Խմորասնկերի թվաքանակը կազմել 430 ԳԱՄ/100 մլ, իսկ բորբոսասնկերինը՝ 10 ԳԱՄ/մլ: Դիտակետում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 9,0 մգՕ₂/դմ³, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 2,7 մգ.Օ/դմ³:

Մանրէաքանակաւ ուսումնասիրություններ են իրականացվել նաև Մասրիկ գետի Ակունք վտակից՝ Վարդենիս քաղաքի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արտահոսքերի թափման հատվածից մոտ 100 մ ներքև՝ մինչև Մասրիկ գետին խառնվելը: Կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ արտահոսքերը գետ լցվելով, ջուրն աղտոտում են մանրէներով: Այսպես, 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 200 հազ. ԳԱՄ/մլ և 42000 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 3,6 մլն ԳԱՄ/լ:

Գետ Արգիճի

Ակունք – կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի ակունքի ջրերում 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 2000 ԳԱՄ/մլ և 270 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,7 հազ. ԳԱՄ/լ: Խմորասնկեր չեն հայտնաբերվել: Բորբոսասնկերի թվաքանակը կազմել է 10 ԳԱՄ/մլ (աղ.3): Դիտակետում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 8,68 մգՕ₂/դմ³: Գրանցվել է պերմանգանատային օքսիդացման համեմատաբար բարձր արժեք՝ 2,96 մգՕ/դմ³, ինչը վկայում է գետը արդեն ակունքում օրգանական նյութերով աղտոտվածության մասին:

Աղյուսակ 3. Սապրոֆիտ մանրէների, խմորասնկերի բորբոսասնկերի քանակը և կոլի-ինդեքսը Արգիճի գետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հազ. ԳԱՄ/լ	Խմորասնկերի թվաքանակ, ԳԱՄ/100մլ	Բորբոսասնկերի թվաքանակ, ԳԱՄ/մլ
	20°C	37°C			
Ակունք	2000	270	0,7	Չի հայտնաբերվել	10
Ներքին Գետաշենից ներքև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ	4000	1120	25,0	620	16
Գետաբերան	3000	840	6,0	330	11

Ներքին Գետաշենից ներքև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ – գետը, հոսելով Մաղիսա, Վերին Գետաշեն և Ներքին Գետաշեն համայնքների միջով, ենթարկվում է աղտոտման, ինչի արդյունքում դիտակետում ակունքի համեմատ արձանագրվել է մանրէների՝ հատկապես սապրոֆիտ մեզոֆիլ մանրէների և աղիքային ցուպիկների քանակական աճ: Այսպես, 20°C-ում և 37°C-ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը համապատասխանաբար կազմել է 4000 ԳԱՄ/մլ և 1120 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 25 հազ. ԳԱՄ/լ: Խմորասնկերի քանակը եղել է 620 ԳԱՄ/100 մլ, իսկ բորբոսասնկերը՝ 16 ԳԱՄ/մլ: Դիտակետում լուծված թթվածնի պարունակությունը կազ-

մել է $12,2 \text{ մգO}_2/\text{դմ}^3$: Նախորդ դիտակետի համեմատ օրգանական նյութի պարունակությունը նվազել է՝ կազմելով $1,84 \text{ մգO}/\text{դմ}^3$:

Գետաբերան – կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ գետի ջրերը Ներքին Գետաշենից դեպի գետաբերան հատվածում ենթարկվում են ինքնամաքման, որի արդյունքում հետազոտված մանրէների քանակը նախորդ դիտակետի համեմատ նվազել է: Այսպես, 20°C -ում և 37°C -ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է $3000 \text{ ԳԱՄ}/\text{մլ}$ և $840 \text{ ԳԱՄ}/\text{մլ}$, իսկ կոլի-ինդեքսը՝ $6,0$ հազ. $\text{ԳԱՄ}/\text{լ}$: Խմորասնկերի քանակը կազմել է $330 \text{ ԳԱՄ}/100 \text{ մլ}$, իսկ բորբոսասնկերինը՝ $11 \text{ ԳԱՄ}/\text{մլ}$: Դիտակետում լուծված թթվածնի պարունակությունը եղել է $10,8 \text{ մգO}_2/\text{դմ}^3$, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ $2,56 \text{ մգ. O}/\text{դմ}^3$:

Գետ Լիճք

Ակունք – հիմնականում ստորերկրյա ջրերով սնվող, գյուղամիջի խոշոր աղբյուրի ելքից մոտ 5 մ Ներքև վերցված փորձանմուշներում 20°C -ում աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակը կազմել է $32 \text{ ԳԱՄ}/\text{մլ}$: Սապրոֆիտ մեզոֆիլ մանրէներ և լակտոզադրական աղիքային ցուպիկներ չեն հայտնաբերվել: Խմորասնկերի և բորբոսասնկերի թվաքանակը համապատասխանաբար կազմել է $40 \text{ ԳԱՄ}/100 \text{ մլ}$ և $1 \text{ ԳԱՄ}/\text{մլ}$ (աղ. 4):

Աղյուսակ 4. Սապրոֆիտ մանրէների, խմորասնկերի բորբոսասնկերի քանակը և կոլի-ինդեքսը Լիճք գետի տարբեր հատվածների ջրերում

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, $\text{ԳԱՄ}/\text{մլ}$		Կոլի-ինդեքս, հազ. $\text{ԳԱՄ}/\text{լ}$	Խմորասնկերի թվաքանակ, $\text{ԳԱՄ}/100\text{մլ}$	Բորբոսասնկերի թվաքանակ, $\text{ԳԱՄ}/\text{մլ}$
	20°C	37°C			
Ակունք	32	0	Չի հայտնաբերվել	40	1
Գետաբերան	3300	380	10,0	440	11

Լիճք գյուղից մոտ 300 մ Ներքև – Գետը, հոսելով համանուն գյուղի միջով, աղտոտվում է ֆեկալ-կենցաղային և գյուղատնտեսական հոսքաջրերով, ինչի արդյունքում ակունքի համեմատ արձանագրվել է մանրէների քանակական աճ և օրգանական նյութի պարունակության ավելացում: Այսպես, 20°C -ում և 37°C -ում աճող սապրոֆիտ մանրէների քանակը կազմել է $3300 \text{ ԳԱՄ}/\text{մլ}$ և $380 \text{ ԳԱՄ}/\text{մլ}$, իսկ կոլի-ինդեքսը՝ 10 հազ. $\text{ԳԱՄ}/\text{լ}$: Մոտ 10 անգամ ավելացել է խմորասնկերի և բորբոսասնկերի քանակը: Դիտակետում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է $10,1 \text{ մգO}_2/\text{դմ}^3$, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ $0,9 \text{ մգ O}/\text{դմ}^3$:

Այսպիսով, ուսումնասիրված բոլոր գետերի վրա առկա է մարդածին գործոնի ինտենսիվ ազդեցությունը: Գետերը հիմնականում ֆեկալ-կենցաղային և գյուղատնտեսական հոսքաջրերով աղտոտվում են համայնքների տարածքներով հոսելիս:

Նախորդ տարիների համեմատ, 2018 թ. գետերի ջրերում մանրէների տարածական բաշխվածության պատկերը գրեթե չի փոխվել, ինչը պայմանավորված է կեղտաջրերի մշտական մուտքով:

20°C և 37°C աճող սապրոֆիտ մանրէների ընդհանուր քանակը ուսումնասիրված գետերի տարբեր հատվածների ջրերում համապատասխանաբար տատանվել է $32-30000$ և $0-3700 \text{ ԳԱՄ}/\text{մլ}$, իսկ կոլի-ինդեքսը՝ $<0,05-80$ հազ. $\text{ԳԱՄ}/\text{լ}$ սահմաններում: Մանրէներով առավել աղտոտված են Գավառագետ և Մասրիկ գետերը: Ընդ որում մանրէների մեծ քանակներ են գրանցվել համայնքներից գետի դուրս եկող հատվածների ջրերում: Գետաբերանային հատվածներում նախորդ դիտակետերի համեմատ արձանագրվել է մանրէների քանակի նվազում, ինչը պայմանավորված է գետերի ջրերի ինքնամաքմամբ:

Խմորասնկերի հանդիպման հաճախությունը կազմել է մոտ 91 %, իսկ թվաքանակը փոփոխվել է 40-1100 ԳԱՄ/100մլ սահմաններում: Բորբոսասնկեր հայտնաբերվել են բոլոր փորձանմուշներում: Նրանց թվաքանակը տատանվել է 1-19 ԳԱՄ/մլ տիրույթում: Առավել մեծ քանակներ գրանցվել են Գավառագետում: Խմորասնկերի և բորբոսասնկերի քանակական փոփոխությունները գետերի տարբեր հատվածների շրջում հիմնականում համադրելի են սապրոֆիտ մանրէների և աղիքային ցուպիկների փոփոխությունների հետ:

Ելնելով մանրէաբանական ցուցանիշների (20°C և 37°C աճող սապրոֆիտ մանրէներ, աղիքային ցուպիկներ) ստացված արդյունքներից՝ ուսումնասիրված գետերի ակունքների շրջերը, համաձայն Ռոմանենկոյի մակերևութային ջրի որակի էկոլոգասանիտարական գնահատման դասվել են՝ Գավառագետ, Մասրիկ և Արգիճի «մաքուր», իսկ Լիճք գետը՝ «չափազանց» մաքուր ջրերի կարգի [12]:

Գետերի՝ համայնքներից դուրս եկող հատվածների դիտակետերի շրջերը դասվել են.

- Լիճք (Լիճք գյուղից մոտ 300 մ ներքև)՝ «թույլ աղտոտված» դասի
- Արգիճի (Ներքին Գետաշենից ներքև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ)՝ «թույլ աղտոտվածից-չափավոր աղտոտված» դասի:

- Գավառագետ (Նորատուս գյուղից վերև՝ ավտոմայրուղու կամրջի հարևանությամբ)՝ «ուժեղ աղտոտված» դասի:

- Մասրիկ՝ (Մասրիկ գյուղի կամրջի հարևանությամբ)՝ «թույլ աղտոտվածից-խիստ աղտոտված» դասի:

Արգիճի և Գավառագետ գետերի գետաբերանների շրջերը դասվել են՝ «բավարար մաքուր», իսկ Մասրիկ գետը՝ «կեղտոտ» ջրերի դասին:

Համաձայն Ամբրագենի դասակարգման՝ ըստ 37°C աճող սապրոֆիտ մանրէների թվաքանակի հետազոտված գետերի ակունքների շրջերը դասվում են «մաքուր դասին»: Համայնքներից դուրս եկող հատվածներում Արգիճի և Գավառագետ գետերի գետաբերանների շրջերը դասվել են՝ «թույլ աղտոտված», Մասրիկ գետը՝ «չափավոր աղտոտված», իսկ գետաբերանների շրջերը՝ «թույլ աղտոտված» ջրերի դասին [4]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միևայան Ա.Մ. Սևանա լճի վտակների աղտոտվածությունը ըստ մանրէաբանական ցուցանիշների. Հայաստանի կենսաբ. հանդես, 56, 3-4, էջ 198-201, 2004.
2. Վարդանյան Յ.Ս. Միևայան Ա.Մ., Հովհաննիսյան Ռ.Հ., Գուլանյան Վ.Գ., Նավասարդյան Է.Գ. Սևանա լճի և լիճ թափվող գետերի ջրերի որակի գնահատումը ըստ մանրէաբանական ցուցանիշների. Հայաստանի կենսաբ. հանդես, 64, 1, էջ 26-30, 2012.
3. Алексин О.А. Руководство по химическому анализу вод суши. Гидрометиздат, Л., 268 с., 1973.
4. Амбразене Ж.П. Классифицирование речных вод по степени загрязненности на основе микробиологических показателей. Водные ресурсы. 5, с. 102-110, 1974.
5. Гамбарян М.Е. К физико-химическому режиму и микрофлоре притоков оз. Севан. Из-во АН Арм. ССР. Сер. Биологии, 14, Н9, с. 65-71, 1961.
6. Драчев С.М. Борьба с загрязнением рек, озер и водохранилищ промышленными и бытовыми стоками. Изд-во Наука, М., 273 с., 1964.
7. Методические указания по санитарно-микробиологическому анализу поверхностных водоемов, М., 36 с., 1981.
8. Методы экспериментальной микологии. Изд-во Наукова Думка, Киев, 238 с., 1973.
9. Минасян А.М. Эколого-микробиологическая характеристика вод оз. Севан и его притоков. Автореф. канд. дисс., Ереван, 21 с., 2009.
10. Новожилова М.И. Аспорогенные дрожжи и их роль в водоемах. Изд-во, Наука, Алма-Ата, 199 с., 1979.
11. Родина А.Г. Методы водной микробиологии. Изд-во Наука, М., 362 с., 1965.
12. Романенко В.Д., Оксик О.П., Жукин В.Н., Стольберг Ф.В., Лаврик В.И. Экологическая оценка воздействия гидротехнического строительства на водные объекты, Киев, Науково Думка, с. 218-221, 1990.

Ստացվել է 11.01.2019



Հայաստանի կենսաբ. հանդես, 2 (71), 2019

ԿԵՂԵՎԻ ՏԱՐԲԵՐ ԳՈՏԻՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՅՏԵՐՍԻ ԱՆԴԱՍՏԱԿԱՅԻՆ ԿՈՐԻՉԻ ՆԵՅՐՈՆԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ս.Ս.ՄԻՆԱՍՅԱՆ, Ծ.Ի. ԱՐԱՄՅԱՆ, Է.Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Լ.Է. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Երևանի պետական լսարան, Տ.Մուշեղյանի անվան
մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն

gh.lilit@mail.ru

Մեծ կիսագնդերի կեղևը մոդուլացնող ազդեցություն է թողնում անդաստակային Դեյտերսի կորիզի (ՎԴԿ) նեյրոնային ակտիվության վրա: Բացահայտված է կապ ՎԴԿ-ի նեյրոնների ֆոնային ակտիվության հաճախության և նրանց փոխհարաբերությունների բնույթի միջև կեղևի ուսումնասիրված գոտիների էլեկտրական խթանման դեպքում:

Մեծ կիսագնդերի կեղև – նեյրոն

Кора больших полушарий оказывает модулирующее влияние на нейрональную активность вестибулярного ядра Дейтерса (ВЯД). Выявлена связь между частотой фоновой активности нейронов ВЯД и характером ее изменения при электростимуляции изученных зон коры.

Кора больших полушарий – нейрон

The cerebral cortex has a modulating effect on the neuronal activity of the lateral vestibular nucleus (Deiters's nucleus). A relationship was found between the frequency of the background activity of neurons of the Deiters's nucleus and the nature of its change under the electrical stimulation of the studied areas of the cortex.

Cerebral cortex – neuron

Կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆՀ) տարբեր գոյացությունների հետ ունեցած կապերի բազմազանությամբ առանձնանում է Դեյտերսի անդաստակային կորիզը (ՎԴԿ): Մեր կողմից ուսումնասիրված գրականության մեջ [2, 5] քիչ են տվյալները ՎԴԿ-ի նեյրոնային ակտիվության կենտրոնախույս կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ: Մարմնագայական, անդաստակային, ընդերային տեղեկատվության բարձրագույն մշակումն ու ինտեգրացիան իրագործող կեղևային շրջանների և ՎԴԿ-ի փոխհարաբերությունների ուսումնասիրությունը օրգանիզմում ընթացող հարմարողական գործընթացների, ինչպես նաև տարբեր խանգարումների մեխանիզմների բացահայտումը ներկայացնում է գիտաբժշկական մեծ հետաքրքրություն: Գիտական գրականության մեջ չկան նաև տեղեկություններ անդաստակային կորիզների գործառույթի կարգավորման մեխանիզմում ԿՆՀ-ի վերընթաց առքերից համակարգերի, մասնավորապես տեսաթմբի փորկողմնային կորիզի (n.VL) դերի վերաբերյալ: Ժամանակակից պատկերացումների համաձայն, n.VL-ը միջնորդավորվում է ինչպես ուղեղիկ-տեսաթմբային [5, 6] այնպես էլ անդաստակատեսա թմբային ուղիներով հաղորդվող ծայրամասային ազդակահոսքի մուտքը կեղևի շարժողական, զգայաշարժական շրջաններ, որոնք ներգրավված են անդաստակային կորիզների ակտիվության կարգավորման մեխանիզմում [1, 6, 7]:

ն.VL-ի բայթայման պայմաններում կեղև-անդաստակային հարաբերությունների առանձնահատկությունների ուսումնասիրությունը կօգնի բացահայտել առերիչ մեխանիզմները և համակարգերով ԿԼՅ հաղորդվող տեղեկատվության դերը ԴԱԿ-ի նեյրոնային ակտիվության կարգավորման մեխանիզմում: Սույն աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել կեղևի տարբեր շրջանների էլեկտրախթանման ազդեցությունը ԴԱԿ-ի նեյրոնային ակտիվության վրա բնականոն պայմաններում:

Նյութ և մեթոդ: Յետազոտությունները կատարվել են 2,5-3,0 կգ բաշ ունեցող ճագարների վրա սուր փորձի պայմաններում: Վիրահատությունները կատարվել են քլորալոզով (30 մգ/կգ) և նեմբուլթալով (10 մգ/կգ) թմրեցման պայմաններում: Կեղևի շարժողական, մարմնագալայական, լիմբիկական, ակնակալանադաշտային շրջանների կորդինատները որոշվել են ըստ Բլինկովի [3], անդաստակային կեղևին՝ ըստ Օդկվիստի [9]: Յետազոտվող շրջանների էլեկտրական գրգռումը կատարվել է 100մկմ տրամագծով կոնստանտային երկբևեռ էլեկտրոդներով (դիմադրությունը 7-10 կՕհմ, միջէլեկտրոդային տարածությունը՝ 0,2-0,3 մմ), „Физиобар“, խթանիչից տրվող ուղղանկյուն ազդակներով (տեվոդությունը՝ 0,1 մվրկ, հոսանքի ուժը՝ 0,12-0,8 մԱ, լարվածությունը՝ 0,3-10 Վ, գրգռման տևողությունը՝ 10 վրկ, հաճախությունը՝ 5 Հց և 60 Հց): ԴԱԿ-ի նեյրոնների ակտիվությունը գրանցվել է արտաբջջային եղանակով՝ կերակրի աղի 3 М լուծույթով լցված ապակյա միկրոէլեկտրոդներով (ծայրի տրամագիծը 1-2 մկմ, դիմադրություն՝ 4-5 մՕհմ): Յետազոտվել է կեղևի տարբեր շրջանների ազդեցությունը ԴԱԿ-ի այն նեյրոնների վրա, որոնք պատասխանում են անդաստակային Նյարդի գրգռմանը (հոսանքի ուժը 0,2-0,3մԱ): Այն իրականացվել է 150մկմ տրամագծով պողպատյա էլեկտրոդներով, որոնք տեղադրվել են լաբիրինթոսի ձկան (կատող) և կլոր (անող) պատուհաններում: Ն.VL-ի բայթայումը իրականացվել է ըստ Ֆիֆկովայի և Մարշալի [4] կորդինատների (L-3, F-2,5; V-11): Ն.VL-ի բայթայումը իրականացվել է գրգռող էլեկտրոդների 45 վրկ-ի ընթացքում “Поток-1” գալվանիզատորից տրվող 1-2 մԱ ուժի հաստատուն հոսանքով: Փորձերը ավարտելուց հետո գրգռվող շրջանների էլեկտրոդիտիկ նշումից հետո (հոսանքի ուժը՝ 2 մԱ, տևողությունը՝ 20-25 վրկ) կենդանու գլխուղեղը ֆիքսվել է ֆորմալինի 10 %-անոց լուծույթով: Էլեկտրոդների տեղադրությունը և Ն.VL-ի բայթայման ճշտությունը ստուգվել է սառեցնող միկրոտոմով արված կտրվածքների վրա: Ստացված թվային տվյալները ենթարկվել են վիճակագրական մշակման ըստ Ստյուդենտի t չափանիշի:

Սրդյունքներ և քննարկում: Գրանցվել է անարատ ճագարների ԴԱԿ-ի 182 նեյրոն, որոնց 93,95 %-ը լիցքաթափվել են մեկական, 6,04 %-ը՝ խմբային պարպումներով: Կեր-ջիններիս ընդող է խմբերում 2-8 ազդակների առաջացում: Միջխմբային ժամանակը կազմել է 100-800 մվրկ: Մեկական ազդակահոսքով 141(82,45 %) նեյրոն պատասխանել են անդաստակային Նյարդի գրգռմանը: Դրանցից 45-ը (31,91 %) լիցքաթափվել են 1-10ազդ/վրկ հաճախությամբ (I խումբ): Միջազդակային ժամանակահատվածը կազմել է 123, 04 ±13,05 մվրկ: 60 (42,55 %) նեյրոններ ունեցել են 11-30 ազդ/վրկ (II խումբ), 36-ը (25,53 %)՝ 31-60 ազդ /վրկ (III խումբ) ելակետային հաճախություն: Միջազդակային ժամանակը կազմել է համապատասխանաբար 61,02±7,53 մվրկ և 25,91±4,61 մվրկ: Կեղևի անդաստակային գոտու ցածր և բարձր հաճախությամբ գրգռումն առաջացրել է համապատասխանաբար 125 (88,64 %) և 128 (90,77 %) նեյրոնների ինքնածին ակտիվության փուլային կամ լարումային փոփոխություններ՝ 6-45 մվրկ տևողությամբ գաղտնի շրջանով: Նեյրոնների ելակետային հաճախությունը վերականգնվել է էլեկտրախթանումից 500-1200 մվրկ անց: Գերակշռել են արգելակման ռեակցիաները, որոնք առավել արտահայտված են III խմբում (համապատասխանաբար 75,0 % և 77,77 % նեյրոններ): Անդաստակային կեղևի հեշտացնող ազդեցությունը հիմնականում արտահայտվել է նեյրոնային ակտիվության լարումային հաճախացմամբ և գերակշռել է I ու II խմբերում (համապատասխանաբար 26,66 % ու 25,0 % միավորներ՝ ցածր և 35,55 % ու 31,66 % միավորներ՝ բարձր հաճախությամբ գրգռելիս): ԴԱԿ-ի նեյրոնների միջին հաճախության փոփոխությունների վերլուծությունը ցույց է տվել, որ անդաստակային կեղևի ցածր հաճախությամբ գրգռմանը դրդմամբ պատասխանող I խմբի նեյրոնների ելակետային ակտիվությունը ավելացել է 62,50 %-ով ($p<0,001$), իսկ բարձր հաճախությամբ գրգռելիս՝ 42,85 %-ով ($p<0,001$): Արգելակմամբ պատասխանող նեյրոնների ազդակահոսքի միջին հաճախությունը նվազել է համապատասխանաբար 50,0 %-ով և 57,14 %-ով ($p<0,001$): III խմբի նեյրոնների պարպումների թիվը պակասել է ընդամենը 25,0 %-ով ($p<0,01$) և 29,27 %-ով ($p<0,001$): Անդաստակային կեղևի գրգռումը չի առաջացրել III խմբի նեյրոնների միջին հաճախության վիճակագրորեն հավաստի մեծացում:

Աղյուսակ 1. Դեյտերսի կորիզի նեյրոնների պարպումների միջին հաճախության փոփոխությունը կեղևի շարժողական գոտու ցածրահաճախ գրգռման դեպքում

Նեյրոնների խմբերը ազդվող	Արգելակում			Դրդում		
	Գրգռումից առաջ	Գրգռումից հետո	Փոփոխ. աստիճան %	Գրգռումից առաջ	Գրգռումից հետո	Փոփոխ. աստիճան %
1-10	7,0±0,41	3,0±0,37 p<0,001	57,14	6,0±0,33	8.5±0,39 p<0,001	29,41
11-30	18,5±1,26	12,0±0,97 p<0,001	35,13	17,0±1,128	22,0±1,31 p<0,05	29.41
31-60	38,0±1,72	32,0±1,68 p<0,02	15,78	32,0±1,66	34,0±1,69 p<0,2	6,25

Հետազոտությունների երկրորդ տարբերակում ուսումնասիրվել է կենդանիների կեղևի շարժողական գոտու էլեկտախթանման ազդեցությունը ԴԱԿ-ի նեյրոնների ակտիվության վրա: Գրանցվել է 110 նեյրոն, որոնց 90,90 %-ն ունեցել են մեկական, 9,09 %-ը՝ խմբային պարպումներով արտահայտվող ելակետային ակտիվություն: Մեկական ազդակներով լիցքաթափվող 85 (85 %) նեյրոններ պատասխանել են նյարդի գրգռմանը: Դրանցից 22-ն (25,88 %) ըստ ելակետային հաճախությամբ դասվել են I, 38-ը (44,70 %)՝ II և 25-ը (29,41 %) III խմբերին: Միջազդակային ժամանակը համապատասխանաբար կազմել է 125,04±12,75 մվրկ, 60,02±6,33 մվրկ և 36,71±4,65 մվրկ: Կեղևի շարժողական գոտու գրգռումն առաջացրել է ԴԱԿ-ի 72 (84,71 %) նեյրոնների ելակետային ակտիվության լարումային կամ փուլային փոփոխություններ՝ 15-50 մվրկ տևողությամբ գաղտնի շրջանով: Գերակշռել են արգելակման ռեակցիաները, որոնք առավել արտահայտված են II և III խմբերում (համապատասխանաբար 62,42 % և 68,00 % միավորներ): Շարժողական կեղևի ցածր և բարձր հաճախությամբ գրգռումն առաջացրել է I խմբի նեյրոնների 50,0 %-ի և 54,54 %-ի պարպումների թվի նվազում: Շարժողական կեղևի հեշտացնող ազդեցությունը գերակշռել է I խմբի նեյրոնների պատասխաններում (համապատասխանաբար 36,26 % և 31,81 %) (աղ. 1):

Աղյուսակ 2. Դեյտերսի կորիզի նեյրոնների պարպումների միջին հաճախության փոփոխությունը կեղևի լիմբիական շրջանի ցածրահաճախ գրգռման դեպքում

Նեյրոնների խմբերը ազդվող	Արգելակում			Դրդում		
	Գրգռումից առաջ	Գրգռումից հետո	Փոփոխ. աստիճան %	Գրգռումից առաջ	Գրգռումից հետո	Փոփոխ. աստիճան %
1-10	8,5±0,31	5,0±0,26 p<0,001	41,18	8,0±0,32	11,0±0,41 p<0,001	37,50
11-30	24,0±1,45	18,0±1,3 p<0,001	25,0	20,0±1,29	24,0±1,47 p<0,05	20,0
31-60	34,0±1,69	29,0±1,53 p<0,02	14,70	32,0±1,66	35,0±1,70 p<0,2	9,30

Հետազոտությունների երրորդ տարբերակում ուսումնասիրվել է կենդանիների կեղևի լիմբիական գոտու էլեկտախթանման ազդեցությունը ԴԱԿ-ի նեյրոնների ակտիվության վրա: Գրանցվել է ԴԱԿ-ի 110 նեյրոն, որոնց 91, 38 %-ը լիցքաթափվել են մեկական, 9,09 %-ը՝ խմբային պարպումներով: Մեկական ազդակահոսքով 24 (22,64 %) միավորներ դասվել են I, 55 (51,88%-ը՝ II, 27 (25,47 %)՝ III խմբերին: Միջազդակային ժամանակը կազմել է համապատասխանաբար 125,04±12,75 մվրկ, 60,02±6,33 մվրկ և 36,71±4,65 մվրկ: Կեղևի լիմբիական գոտու ցածր և բարձր հաճախությամբ գրգռումն առաջացրել է ԴԱԿ-ի 86 (81,13 %) և 91 (85,84 %) նեյրոնների ելակետային ակտիվության փուլային կամ լարումային փոփոխություններ՝ 25-60 մվրկ տևողությամբ գաղտնի շրջանով:

Գերակշռել են արգելական ռեակցիաները, որոնք առավել արտահայտված են III խմբում (համապատասխանաբար 55,55 % և 62,96 % նեյրոններ): Լիմբիկական կեղևի գրգռմանը ելակետային ակտիվության մեծացմամբ պատասխանող նեյրոնները հիմնականում պատկանում են I և II խմբերին և կազմում են համապատասխանաբար 41,66 % և 38,18 % (աղ.2):

Հետազոտությունների չորրորդ տարբերակում ուսումնասիրվել է կենդանիների կեղևի մարմնազգայական գոտու էլեկտրախթանման ազդեցությունը ԴԱԿ-ի նեյրոնային ակտիվության վրա: Հետազոտվել է ԴԱԿ-ի 97 նեյրոն, որոնց 92,98 %-ն ունեցել է մեկական, 7,21 %-ը խմբային պարպումներով արտահայտվող ելակետային ակտիվություն: Մեկական ազդակահոսքով 24 (26,66 %) միավորները դասվել են I, 42 (46,66 %-ը, II, 24 (26,66 %-ը՝ III խմբերին: Միջազգայային ժամանակը կազմել է համապատասխանաբար $120,03 \pm 12$ մվրկ, $62,01 \pm 6,13$ մվրկ և $35,68 \pm 4,55$ մվրկ:

Կեղևի մարմնազգայական գոտու ցածր և բարձր հաճախությամբ գրգռումը առաջացրել է ԴԱԿ-ի հետազոտված նեյրոններից 78 (86,66 %) և 84 (93,33%-ի փուլային կամ լարումային ռեակցիաներ, որոնք հիմնականում կրել են արգելակող բնույթ: Մարմնազգայական կեղևից 5 Հց և 60 Հց հաճախությամբ գրգռումն առաջացրել է I խմբի նեյրոնների 37,50 %-ի և 54,16 %-ի պարպումների թվի նվազում: III խմբում արգելակմամբ պատասխանող միավորները կազմել են ընդհանուրի 66, 66 %-ը և 75 %-ը: Կեղևի մարմնազգայական գոտու հեշտացնող ազդեցությունը հիմնականում արտահայտվել է I ու II խմբի նեյրոնների պատասխաններում (համապատասխանաբար 45,81 % և 30, 95 % նեյրոններ): Գրանցված պատասխանների գաղտնի շրջանները տատանվել են 10-50 մվրկ-ի սահմաններում:

Հետազոտությունների հինգերորդ տարբերակում ուսումնասիրվել է կեղևի ակնակապճաճակատային շրջանի էլեկտրախթանման ազդեցությունը ԴԱԿ-ի նեյրոնային ակտիվության վրա: Հետազոտվել է անարատ ճագարների ԴԱԿ-ի 77 նեյրոն (90,90 %-ը մեկական, 9,09 %-ը՝ խմբային պարպումներով): Ըստ ելակետային հաճախության 22 (31,42%) միավորներ դասվել են I, 36-ը (51,43 %)՝ II, 12-ը (17,14 %)՝ III խմբերին: Միջազգայային ժամանակահատվածը կազմել է համապատասխանաբար $120,03 \pm 12,35$ մվրկ, $63,05 \pm 6,33$ մվրկ, $32,68 \pm 4,85$ մվրկ: Կեղևի ակնակապճաճակատային շրջանի գրգռումը ԴԱԿ-ի նեյրոնների վրա հիմնականում թողել է արգելակող ազդեցություն, որն առավել արտահայտված է I խմբում (համապատասխանաբար 40,91 % և 54,54 % նեյրոններ): III խմբում արգելակող միավորները կազմել են 66,66 % և 75,0 %: Կեղևի ակնակապճաճակատային գոտու հեշտացնող ազդեցությունն արտահայտվել է ցածր ու միջին ելակետային հաճախությամբ նեյրոնների պատասխաններում: III խմբի նեյրոնները կեղևի գրգռմանը պատասխանել են միայն արգելակմամբ: Նեյրոնային ռեակցիաների գաղտնի շրջանները տատանվել են 15-60 մվրկ-ի սահմանում:

Ստացված տվյալների վերլուծությունը վկայում է, որ ճագարների ԴԱԿ-ի նեյրոնային ակտիվությունն ենթարկվում է կեղևի անդաստակային, մարմնազգայական, շարժողական, լիմբիկական, ակնակապճաճակատային շրջանների արդյունավետ կարգավորող ազդեցությանը: ԴԱԿ-ի նեյրոնների ամենաբարձր ռեակտիվություն դիտվում է կեղևի անդաստակային ու մարմնազգայական դաշտերի գրգռման դեպքում, որտեղ տեղակայված են ճագարների անդաստակային կեղևային ուրվագծման կիզակետերը [2, 5, 8]: Կեղևի խթանումը ԴԱԿ-ի նեյրոնային ակտիվության վրա հիմնականում թողնում է արգելակող ազդեցություն, որն առավել արտահայտված է անդաստակային և շարժողական գոտիները գրգռելիս: Կենտրոնախույս դրդող ազդեցությունը համեմատաբար արտահայտված է մարմնազգայական, լիմբիկական, ամենաթույլը՝ շարժողական գոտիների էլեկտրախթանման դեպքում: Կատուների գլխուղեղի կեղևի արգելակող ազդեցությունն անդաստակային կորիզների նեյրոնային ակտիվության, ինչպես նաև անդաստակային ռեֆլեքսների վրա բացահայտվել է մի շարք էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտություններով [2, 5, 8]: Նկատի ունենալով կեղևի խթանման անդաստակային նեյրոնների պատասխանների համեմատաբար երկար գաղտնի շրջանները, կարելի է եզրակացնել, որ կենտրոնախույս ազդեցությունները ԴԱԿ-ին հաղորդվում են բազմափնապային ուղիներով՝ միջնորդավորվելով ենթակեղևային տարբեր գոյացություններով (ուղեղիկ, ուղեղաբնի ցանցանման գոյացություն, ստորին ձիթապտուղ, Կախալի կորիզ, կարմիր կորիզ, ենթատեսաթումբ), որոնց ազդեցությունը ԴԱԿ-ի վրա բացահայտվել է ժամանակակից հետազոտություններով [1, 2, 5, 8]:

Վերջին տարիներին նյարդաբանական աշխատանքներով հայտնաբերվել են կեղևի հետազոտված շրջանների ուղիղ ուրվագծում ԴԱԿ-ում, որոնցով հաղորդվող ազդեցությունները հիմնականում հեշտացնող բնույթի են [2, 5, 8]: Ըստ մեր տվյալների, կենտրոնախույս միասինապային դրող ազդեցություններին հաջորդում են տարբեր գոյացություններով միջնորդավորված արգելակող ազդեցությունները, որոնք սահմանափակում են անդաստակային նեյրոնների ակտիվությունը և իրագործում դրանց ընթացիկ հաճախության կարգավորումը: Կեղևի տարբեր շրջանների հաջորդական գրգռման դեպքում անդաստակային նեյրոնների պատասխանների վերլուծությունը վկայում է ԴԱԿ-ում կեղևի հետազոտված շրջանների վարընթաց ազդեցության լայն զուգամիտման մասին, ինչը, ըստ երևույթին, կարևոր է միջգլայարանային ինտեգրացիայի պրոցեսների ապահովման, ողնուղեղի շարժողական կենտրոններ ուղարկվող համապատասխան հրահանգների ձևավորման մեխանիզմում: Հարկ է նշել, որ կեղևի էլեկտրախթանմանը ԴԱԿ-ի նեյրոնների պատասխանների բնույթը կախված է նրանց ինքնաձև ակտիվության մակարդակից: Դրոմամբ պատասխանող միավորները հիմնականում ունեն ցածր էլակետային ակտիվություն, իսկ 31-60 ազդվրկ հաճախությամբ լիցքաթափվող նեյրոնների ռեակցիաները գերազանցապես արգելակող բնույթի են: Ըստ ստացված տվյալների, n.VL-ի քայքայումից հետո դիտվում է շարժողական և մարմնազգայական կեղևի վարընթաց արգելակող ազդեցության թուլացում: Ստուգիչ փորձերի արդյունքների վերլուծությունից հետևում է, որ շարժողական կեղևը, հետազոտված մյուս շրջանների համեմատությամբ ԴԱԿ-ի գործառույթների վրա թողնում է առավել արտահայտված ճնշող ազդեցություն: Այսպիսով, մեր հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ուղեղն օժտված է ակտիվ փոխհատուցողական մեխանիզմներով, որոնք ապահովում են ԴԱԿ-ի նեյրոնային ակտիվության համապատասխան կարգավորումը տարբեր իրավիճակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бадалян С.А. Нейронные популяции-источники корковоталамических проекций к частично деафферентированному внутрилатеральному ядру таламуса. Российский физиол. ж. им. И.М. Сеченова, 100, 1, с. 3-17, 2014.
2. Бадалян С.А., Ипекчян В.А., Саркисян В.А. Особенности проявления пластической изменчивости в билатерально организованных звеньях мозжечково- и вестибулоталамических систем. Российский физиол. ж. им. И.М. Сеченова, 104, 1, с. 39-52, 2018.
3. Блинков С.М., Бразовская Ф.А., Пуцилло М.Б. Атлас мозга кролика. М., Медицина, 1973.
4. Буреш Я., Петрань М., Захар И. Электрофизиологические методы исследования. М., изд.-во Иностран. Литературы, 452 с., 1962.
5. Корытов Л.И., Сусликова М.И. Отражение стрессорного состояния организма в паттерных импульсной активности отдельных нейронов структур головного мозга. Вестник науки Сибири, 15, 2, с. 297-302, 2015.
6. Лепеницкая Т.Д., Дунаева С.А., Полякова С.П. Межцентральные отношения в коре больших полушарий головного мозга человека при хроническом действии неблагоприятных производственных факторов. Мед. Труд и промыш. Экология, 8, с. 23-28, 2004.
7. Мачинская Р.И. Управляющие системы мозга. Ж. Высшей нервной деятельности им. И.П. Павлова, 65, 1, с. 33-60, 2015.
8. Силькис И.Г. Вклад синаптической пластичности в базальных ганглиях в обработке зрительной информации. Ж. Высшей нервной деятельности им. И.П. Павлова, 56, 6, с. 742-756, 2006.
9. Odkvist L., Rubin A., Schwarz D. Vestibular cortical projection in the rabbit. J. Comp. Neural., 149, 1, 117-120, 1973.

Ստացվել է 27.12.2018



Հայաստանի կենսաբ. հանդես, 2 (71), 2019

**ՍԵՍՏՈՆՈՒՄ ԱԵՖ ԲԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՆԴԱԴԵՑՎԱԾ
ՖԼՅՈՒՐԵՍԵՆՑԻԱՅԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԵՎԱՆԻ ԼՃԻ
ՊԼԱՆԿՏՈՆԻ ԿԵՆՍԱԶԱՆԳՎԱԾԻ ԵՎ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ԶԱՓՄԱՆ
ԷՔՍՊՐԵՍ ԻՆԴԻԿԱՏՈՐՆԵՐ**

Ս.Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և Հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն,
Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ
sarsur@bk.ru

Սևանա լճում ուսումնասիրվել է սեստոնի կենսազանգվածի բաշխվածությունը ըստ խորությունների ԱԵՖ-մետրիայի եղանակով: Դանդաղեցված ֆյուորեսցենցիայի գրանցման մեթոդով ճշտված է ֆիտոպլանկտոնի բաշխվածությունը: Միաժամանակ նույն խորություններում որոշված է ընդհանուր օրգանական նյութի քանակությունը ջրի օքսիդացվածության աստիճանի չափմամբ: Այս երեք մեթոդներով ֆիքսված օրգանական նյութի բաշխվածության դինամիկայի միջև դիտվում է զուգահեռականություն:

*Սեստոնի ԱԵՖ – կենսազանգված – դանդաղեցված ֆյուորեսցենցիա –
օրգանական նյութի բաշխվածություն*

По способу АТФ-метрии на оз. Севан исследовано распределение биомассы сестона по глубинам. Распределение фитопланктона уточнено по методу регистрации замедленной флюоресценции. Одновременно по измерению степени окисляемости воды определено общее органическое вещество по глубинам. Наблюдается параллелизм по динамике распределения органического вещества зафиксированный этими тремя методами.

*АТФ сестона – биомасса – замедленная флюоресценция – распределение
органического вещества*

The distribution of the biomass of the seston in depths was investigated by the method of ATP-metry on lake Sevan. The distribution of phytoplankton is specified by the method of recording delayed fluorescence. At the same time, the total organic matter was determined from the depths by measuring the degree of oxidation of water. There is a parallelism in the dynamics of the distribution of organic matter recorded by these three methods.

ATP seston – biomass – delayed fluorescence – distribution – organic matter

Սևանա լճի մակարդակի իջեցումը Էներգիայի ստացման համար և լճից պարբերաբար կրկնվող մեծ ջրային արտահոսքերը ի վերջո բացասական դեր են խաղում այս բարդ ինքնակարգավորվող ջրային էկոհամակարգի վրա: Այս պայմաններում առանձնապես ակտուալ են դառնում հետազոտության ժամանակակից ու մեծ ճշտություն և օպերատիվություն ունեցող մեթոդների կիրառումը, որոնցից են, մասնավորապես, ադենոզինեռֆոսֆորական թթվի (ԱԵՖ) և դանդաղեցված ֆյուորեսցենցիայի (ԴՖ)-ի գրանցման մեթոդները: Պլանկտոնային միկրոֆլորայի կենդանի կենսազանգվածի քանակական որոշումը և տրոֆիկ մակարդակների մետաբոլիկ ակտիվության

բնութագրումը հանդիսանում են պլանկտոնային համակցությունների պրոդուկցիոն պրոցեսների ուսումնասիրման հիմնարար ուղենիշները: Ջրի շերտերում կենդանի միկրոֆլորայի կենսազանգվածի չափման համար կիրառում են հիմնականում երկու մեթոդներ. 1) ուղղակի մանրադիտակային հաշվարկ և 2) կախություն ադենոզին-եռֆոսֆորական թթվի (ԱԵՖ) քանակական հաշվարկ [2, 5]: Առաջին մեթոդի թերություններն են հանդիսանում երկարատևությունը, աշխատատարությունը, կենդանի և մահացած բջիջների վատ և դժվար տարբերակումը, դեյտրիտային մասնիկների սխալմամբ հաշվարկը և այլն: ԱԵՖ-ի գրանցման մեթոդը լիովին վերացնում է նշված թերությունները և հիմնված է այն ենթադրության վրա, որ կենդանի մանրէների բջիջները պարունակում են մոտ 0,2 % ԱԵՖ-ի աղեր, որը և առկա է միայն կենդանի օրգանիզմների բջիջներում: Զանի որ սեստոնի կենսազանգվածի բաղադրության մեջ մտնում են տարբեր տրոֆիկական մակարդակների ներկայացուցիչներ, նրանց առանձին որոշումը մեծ հետաքրքրություն ունի, որը անհրաժեշտ է ցանկացած պրոդուկցիոն հաշվարկի և առավել ևս պլանկտոնային համակցությունների էներգետիկայի ուսումնասիրման համար: Այդ պատճառով աշխատանքում փորձ է կատարված մասնակիորեն տարանջատել բակտերիոպլանկտոնի հատվածը և որոշել նրանում ԱԵՖ-ի քանակությունը սեստոնի ԱԵՖ-ի հետ զուգահեռ: Ոչ պակաս էքսպրես և ինֆորմացիոն է Դանդաղեցված ֆյուրոբեսցենցիայի (ԴՖ) մեթոդը: ԴՖ-ն յուրահատուկ է հիմնականում միայն ֆիտոպլանկտոնին և պայմանավորված է բլորոֆիլի դանդաղեցված հետ-լուսարձակմամբ: ԴՖ-ի ինտենսիվությունը ուղղակիորեն արտացոլում է ֆիտո-պլանկտոնի պրոդուկցիոն ընդունակությունը և այդ պատճառով հանդիսանում է նրա կենսավերարտադրման ինֆորմատիվ ցուցանիշը [7]: ԴՖ-ն մեծամասամբ գրանցվում է սարքով, որը ներառում է ֆոսֆորոսկոպ: Սակայն ֆոսֆորոսկոպով գրանցումը սահմանափակվում է միայն ԴՖ-ի միլիվարկյանային բաղադրիչով, որը խիստ զգայուն է գրգռող լույսի ինտենսիվությունից, հաճախականությունից և պահանջվում է որոշակի ժամանակահատված գրգռվող բլորոֆիլակիր բջիջներին ստրեսային վիճակից դուրս գալու համար, որը երբեմն հանգեցնում է ոչ կայուն արդյունքների: ԴՖ-ի վարկյանային և թուլեական բաղադրիչների գրանցումը առավել մոտեցված է բնական պայմաններին, որի հետևանքով գրանցվում են առավել կայուն արդյունքներ: Այդ պատճառով այս աշխատանքում հետազոտվել են ԴՖ-ի թուլեական բաղադրիչները, որոնք զերծ են նշված թերություններից: Նշված երկու մեթոդներին զուգահեռ ջրանմուշներում ուսումնասիրվել է նաև օրգանական նյութի քանակությունը ջրի օքսիդացվածության աստիճանի չափմամբ, որը լրացնում և խորացնում է հետազոտությունների շրջանակը: Ընդ որում, այս մեթոդում մեր կողմից առաջարկված մասնակիորեն նոր մեթոդական մոտեցման շնորհիվ [9] արդյունքները ավելի խորացված և հստակ են: Ջրում օրգանական նյութի քանակության ԱԵՖ-մետրիայով որոշումը հնարավորություն է տալիս ստանալ ջրում գտնվող դեռևս չլուծված կենդանի օրգանական նյութի բաշխվածության դինամիկան, իսկ վերջինիս մեջ ֆիտոպլանկտոնի բաղադրիչի մասին պատկերացում է տալիս նույն ջրանմուշում ԴՖ-ի որոշումը: Դրանց համադրումը նույն ջրանմուշում ամբողջ օրգանական նյութի (և լուծված, և չլուծված) օքսիդացվածության աստիճանի հետ, հնարավորություն է տալիս առավել հիմնավորված պատասխաններ տալ ջրի որակի վերաբերյալ: Սկանա լճից և լիճ թափվող գետերից պարբերաբար վերցվող ջրանմուշներում այս էքսպրես մեթոդներով հետազոտությունների կազմակերպումը թույլ կտա գրանցել ջրի որակի փոփոխությունների դինամիկայի տարեկան ընթացքը լիճ թափվող գետերից յուրաքանչյուրի համար և Սկանա լճի համար ընդհանրապես, ինչը հնարավորություն կտա մշակել առավել գիտականորեն հիմնավորված բնապահպանական ծրագրեր ուղղված ջրի որակի բարձրացման ուղղությամբ: Դրա համար այս աշխատանքի նպատակն է հանդիսացել այս երեք մեթոդներով ջրանմուշների միաժամանակյա հետազոտմամբ ուսումնասիրել օրգանական նյութի բաշխվածության օրինաչափությունները Սկանա լճի օրինակով:

Նյութ և մեթոդ: Ջրանմուշները վերցվել են 07.06.2018-ին Փոքր Սկանի № 4 և Մեծ Սկանի «Ծովկար» դիտակետերից (մաքսիմալ խորությունները 65 մ և 30 մ համապատասխանաբար) յուրաքանչյուր 10 մ ըստ խորության: Թարմ ջրանմուշները լաբորատորիա էին տեղափոխվում 1,5 լ պլաստիկ շշերով: ԱԵՖ-ի քանակական անալիզների համար 200 մլ թարմ ջրանմուշները ֆիլտրվում էին «Վլադիպոր» № 10 և № 3 մեմբրանային ֆիլտրերով:

Սեստոնի խտացման համար կիրառվող № 10 ֆիլտրը որսում է 1,0 մկմ-ից մեծ ֆրակցիաները: Բակտերիոպլանկտոնի համար առաջին գոյություն չունի իդիալական մեթոդ, որը լիովին առանձնացնում և կոնցենտրացնում է բացառապես ամբողջ բակտերիոպլանկտոնը: հաշվի առնելով հայտնի փորձը [6], ընտրվել է բակտերիոպլանկտոնի մասնակի առանձնացման օպտիմալ տարբերակը: № 10 ֆիլտրից հետո անցած ֆիլտրատը անց էր կացվում № 3 մեմբրանային ֆիլտրով, որը թույլ է տալիս կոնցենտրացնել բակտերիոպլանկտոնի 0,25 մկմ-ից մինչև 1,0 մկմ չափսերի մի փոքր նեղ, բայց առավել հստակ և մաքուր առանձնացվող ֆրակցիան, որտեղ այլ կենսաձևերի առկայությունը շատ քիչ է: Իսկ 1,0 մկմ-ից մեծ բակտերիաները որսվում են № 10 ֆիլտրով և չափվում են սեստոնի ընդհանուր կենսազանգվածի հետ: ԱԵՖ-ի էքստրակցիան կատարվում էր հայտնի մեթոդով [8], որի էությունը կայանում է հետևյալում: սեստոնով խտացված ֆիլտրը տեղափոխվում է քիմիական բաժակի մեջ և վրան լցվում էռացող տրիսբուֆեր (5 մլ, 0,02 Մ, pH=7,6): Էքստրակցիան կատարվում է եռացող ջրային բաղնիքում 5 րոպեի ընթացքում: Ստացված էքստրակտում ԱԵՖ-ի քանակության որոշումը կատարվում էր յուրօրինակ-յուրօրինակ փոխարինման միջոցով [8] մեր կողմից ստանդարտ սարքավորումներից հավաքված սարքի օգնությամբ: ԱԵՖ-ի կենսազանգվածի վերահաշվարկի համար կիրառվել է 3000 գործակիցը [5]:

ԴՖ-ի ռոպեական բաղադրիչների (1-ից մինչև 3 ռ) չափումների համար կոնցենտրացված ֆիտոպլանկտոնը լուսավորվում էր 1ր 500 յուրա լուսավորվածությամբ, և տեղափոխվում սարքի մուկ կամերա և գրանցվում էտելուսարձակման ինտենսիվության մարման կինետիկան 1-ից մինչև 3 ռ ընթացքում մեր կողմից ստանդարտ սարքավորումներից հավաքված սարքի օգնությամբ:

Ջրանմուշներում ընդհանուր օրգանական նյութի քանակությունը չափվում էր ջրի օքսիդացվածության աստիճանի որոշմամբ Կուբելի մեթոդով [3], զուգահեռ կիրառելով մեր կողմից մասնակի կատարելագործված տարբերակը [9]: Ջրի կոշտությունը որոշվում էր միաժամանակ և կոմպլեքսոնոմետրիկ [4] և մեր ստացած արտոնագրված [1] եղանակներով, որը հնարավորություն է ստեղծում որոշել ջրի վերստվածքային մասում և խտվածքում օքսիդացվածության աստիճանները առանձին-առանձին: Ջրում ջրածնային իոնի կոնցենտրացիան չափվել է pH-12.1 սարքով:

Արդյունքներ և քննարկում: Մեծ Սևանի Ծովինար դիտակետի 4 խորություններից (0; 10; 20 և 30 մ) վերցրած ջրանմուշներում օքսիդացվածության աստիճանի արդյունքները Կուբելի մեթոդով բերված են աղ. 1-ում: Դրանք էականորեն իրարից չեն տարբերվում: Տարբերությունները առավել հստակ են ի հայտ գալիս վերստվածքային ջրում (աղ.1) և խտվածքում (աղ.1) աղերի հետ կապված օրգանական նյութի օքսիդացվածության աստիճաններում:

Աղյուսակ 1. Մեծ Սևանի Ծովինար դիտակետի ջրանմուշների օքսիդացվածության աստիճանի բաշխվածությունը ըստ խորությունների, մգ Օ/լ

Տող	խորությունները, մ	0	10	20	30
1	Ջրի օքսիդացվածությունը	3,36	3,36	3,20	3,20
2	Վերստվածքային ջրի օքսիդացվածությունը	2,90	2,80	2,80	2,75
3	Նստվածքի օքսիդացվածությունը	0,75	0,44	0,42	0,43

Ինչպես երևում է աղ.1-ից, Մեծ Սևանի Ծովինար դիտակետում խտվածքում օրգանական նյութը (տող 3) առավել ընդգծված մաքսիմալ է մակերեսին (0 մ) 0,75 մգ Օ/լ, ընդ որում ջրի կոշտությունը ըստ խորությունների էականորեն չի փոխվում և հավասար է 5,8 մգ-էկվ /լ: Սա կարող է ենթադրել այն հանգամանքը, որ այս դիտակետում հունիսի սկզբին սեստոնի կենդանի օրգանական նյութը (ֆիտոպլանկտոն, միկրոզոոպլանկտոն, բակտերիոպլանկտոն) մաքսիմալ է մակերեսային շերտում: Մեր հետազա փորձերում ըստ խորությունների ֆիտոպլանկտոնից ԴՖ-ի գրանցման արդյունքները հաստատում են դա: Աղ. 2-ում բերված են դանդաղեցված ֆյուլորեսցենցիայի 1-րոպեանոց բաղադրիչի արժեքները, որոնք ըստ մեր հետազոտությունների արդյունքների առավել հստակ և կայուն են արտացոլում արդյունքների տարբերությունը:

Սեստոնի և բակտերիոպլանկտոնի կենսազանգվածների ԱԵՖ-մետրիայի մեթոդով ուսումնասիրության արդյունքները բերված են աղ. 3 ում:

Արդյունքներից երևում է, որ Մեծ Սևանում սեստոնի և բակտերիոպլանկտոնի կենսազանգվածները մաքսիմալ են մակերեսային շերտում (0 մ): ԱԵՖ-ի կենսազանգվածների բերված արդյունքները համեմատած կենսազանգվածի ըստ մանրադիտակի տակ ուղղակի հաշվարկի մոտ 1,3-ից 3 անգամ նվազեցված են [6], որի պատճառն է հանդիսանում այն, որ ԱԵՖ-ի մեթոդով գրանցվում է միայն կենդանի սեստոնը, իսկ մանրադիտակի տակ կենդանի և անկենդան օրգանիզմները տարանջատելը դժվար է և

այստեղ նույնպես հաշվվում են նաև մահացած միկրոօրգանիզմները: Այս դիտակետում 0; 10 և 20 մ խորություններում ջրի pH=9,2 է, իսկ 30 մ pH=9,1:

Աղյուսակ 2. Մեծ Սևանի Շովինար դիտակետի ջրանմուշներում ֆիտոպլանկտոնի ԴՖ-ի ինտենսիվությունը ըստ խորությունների (հարաբերական միավոր)

խորությունները, մ	0	10	20	30
Դանդաղեցված ֆլուորեսցենցիան	30	17	20	17

Աղյուսակ 3. Մեծ Սևանի Շովինար դիտակետի ջրանմուշներում ԱԵՖ-ի քանակի (նգ/լ) և դրան համապատասխան կենսազանգվածների (մգ) բաշխվածությունը ըստ խորությունների

խորությունները, մ	0	10	20	30
Սեստոնի ԱԵՖ-ի քանակը	640	400	224	300
Սեստոնի կենսազանգվածը	1,92	1,20	0,67	0,90
Բակտերիոպլանկտոնի ԱԵՖ-ի քանակը	112	75	30	60
Բակտերիոպլանկտոնի կենսազանգվածը	0,34	0,25	0,10	0,18

Փոքր Սևանի № 4 կայանի 6 խորություններից – 0; 10; 20; 30; 50 և 60 մ ջրանմուշներից ստացված ջրի օքսիդացվածության անալիզի արդյունքները բերված են աղ. 4-ում:

Աղյուսակ 4. Օրգանական նյութի բաշխվածությունը ըստ խորությունների Սևանա լճի № 4 կայանում ըստ ջրի օքսիդացվածության աստիճանի, մգ Օ/լ -ով

խորությունները, մետր	0	10	20	30	50	60
Զրի օքսիդացվածությունը	3,20	3,36	3,36	3,20	3,04	2,72
Վերնստվածքային ջրի օքսիդացվածությունը	2,75	2,90	2,85	2,70	2,57	2,30
Նստվածքի օքսիդացվածությունը	0,55	0,80	0,60	0,44	0,40	0,35

Ինչպես երևում է աղ.4-ի արդյունքներից, ըստ ջրի օքսիդացվածության աստիճանի օրգանական նյութը առավել շատ է բաշխված 10 և 20 մ խորություններում, իսկ վերնստվածքային ջրում և նստվածքում այն առավել ընդգծված մաքսիմալ տեղաբաշխված է 10 մ խորությունում: Այսինքն ըստ ջրանմուշի երեք տարբեր ֆրակցիաներում (ջրում, վերնստվածքային ջրում և նստվածքում) որոշման, օրգանական նյութի բաշխվածության մաքսիմումը հանդիսանում է 10 մ խորությունը, իսկ մինիմալը 50 և 60 մ: Ջրի pH-ի արդյունքները շատ մոտ են իրար և գտնվում են 9,15-ից – 9,0-ի սահմանում: Նույն խորություններում ֆիտոպլանկտոնի ԴՖ-ի չափումների արդյունքում ևս մաքսիմալ արժեքները գրանցվում են 10 մ խորությունում (աղ.5): Աղյուսակի արդյունքները ընդգծված ցույց են տալիս, որ Փոքր Սևանի № 4 կայանում մայիսի վերջին ԴՖ-ի բոլոր երեք բաղադրիչներով որոշված ֆիտոպլանկտոնի մաքսիմալ բաշխվածությունը գտնվում է 10 մ խորությունում և դեպի հատակ աստիճանաբար նվազում է:

Աղյուսակ 5. Փոքր Սևանի № 4 կայանում ֆիտոպլանկտոնի Դանդաղեցված ֆլուորեսցենցիայի (ԴՖ) ինտենսիվությունը ըստ խորությունների (հար. միավորներ)

խորությունները, մ	0	10	20	30	50	60
ԴՖ-ի 1-րդ պեղանակային բաղադրիչը	38	53	23	15	8	7
ԴՖ-ի 2-րդ պեղանակային բաղադրիչը	14	25	8	5	4	3
ԴՖ-ի 3-րդ պեղանակային բաղադրիչը	8	13	5	3	1	1

Նույն խորություններում սեստոնի և բակտերիոպլանկտոնի կենսազանգվածների ԱԵՖ-մետրիայի մեթոդով ուսումնասիրության արդյունքները բերված են աղ. 6 ում : Բերված արդյունքներից երևում են, որ ԱԵՖ-մետրիայով ստացված սեստոնի և բակտերիոպլանկտոնի կենսազանգվածների մաքսիմալ բաշխվածությունը ըստ խորությունների նույնպես գտնվում է 10 մ: Ջրի կոշտության ցուցանիշը էականորեն չի տարբերվում և գտնվում է 5,7-ից 5,9 մգ-էկվ /լ սահմաններում:

Աղյուսակ 6. Փոքր Սևանի № 4 կայանի խորություններում սեստոնի և բակտերիոպլանկտոնի ԱԵՖ-ի բանակության (մգ/) և նրան համապատասխան կենսազանգվածի (մգ/լ) բաշխվածությունը

խորությունները, մ	0	10	20	30	50	60
Սեստոնի ԱԵՖ-ի բանակը	620	726	650	485	484	495
Սեստոնի կենսազանգվածը	1,86	2,18	1,85	1,46	1,45	1,49
Բակտերիոպլանկտոնի ԱԵՖ-ի բանակը	52	82	64	30	60	62
Բակտերիոպլանկտոնի կենսազանգվածը	0,16	0,25	0,19	0,09	0,18	0,19

Ստորև ներկայացվում են Սևանի № 4 կայանով նոյեմբերին գիտարշավի ժամանակ (6.11.2018) միայն մակերեսից վերցված ջրանմուշների հետազոտման արդյունքները. Ջրի pH=8,8; օքսիդացվածությունը 2,88 մգ-Օ/լ, իսկ ԴՖ-ի 1; 2 և 3 ռոպեանոց բաղադրիչների արժեքներն են- 13; 5 և 2,5 հարաբերական միավոր համապատասխանաբար: Արդյունքները համեմատելով նույն կայանից հունիսի գիտարշավի մակերեսից արդյունքների հետ (աղ. 4 և 5). կարելի է արձանագրել, որ ջրի օքսիդացվածությունը նոյեմբերին նվազել է մոտավորապես 0,3 մգ Օ/լ-ով, իսկ ֆիտոպլանկտոնի բոլոր երեք բաղադրիչները նվազել են եռապատիկ: Արդյունքներից կարելի է նախնական եզրակացնել, որ ջրի մակերեսային շերտի օքսիդացվածության նվազման մեջ մեծ դեր ունի նաև ֆիտոպլանկտոնի այս եռապատիկ նվազումը: Հունիսին այս երեք անկախ մեթոդներով ընդհանուր օրգանական նյութի բաշխվածության դիստրիբյուցիայի միջև դիտվում է զուգահեռականություն, ընդ վորում, Փոքր Սևանի № 4 կայանում օրգանական նյութի մաքսիմալ բաշխվածությունը 10 մ խորությունում է, իսկ Մեծ Սևանի Շովինար դիտակետում՝ մակերեսային շերտում, որը պայմանավորված է սեստոնի (միկրոզոոպլանկտոն, ֆիտոպլանկտոն, բակտերիոպլանկտոն) հենց այդ խորություններում մաքսիմալ բաշխվածությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Սարգսյան Ս.Ա.* Ջրի կոշտության որոշման եղանակ; ՀՀ Արտոնագիր № 2823A, գրանցված 25.03.2014.
2. *Лопухин А.С., Кирилов И.В.* АТФ как показатель распределения биомассы микропланктона в центральной части Аравийского моря. Экология моря, 23, с. 11-16, 1986.
3. *Лурье Ю.Ю.* Общие методы для анализа воды. Изд-2, М., Химия, с.376, 1973.
4. *Лурье Ю.Ю.* Универсальные методы анализа вод в СССР. М., с.374, 1971.
5. *Мельников И.А.* Сравнение величин биомассы микропланктона, определенных по АТФ и методу прямого микроскопирования. Океанология, 1976, вып. 2, с. 324-328.
6. *Сорокин Ю.И., Люцарев С.В.,* Сравнительная оценка двух методов определения биомассы планктонной микрофлоры. Океанология, вып. 2, с. 358-364, 1978.
7. *Цылев О.П., Ткаченко В.Н., Старцева А.И.* Замедленная флюоресценция природных сообществ морского фитопланктона. Экология, 4, с.18-23, 1980.
8. *Holm-Hansen O.* Determination of microbial biomass as ocean profiles. Idem, 14, 5, p. 740-747. 1969.
9. *Sargsyan S.A.* Investigation of hardness and permanganate oxidation value in water systems by a new methodical approach. Modern Environmental Science and Engineering. April 1, 1, pp 49-52, 2015.

Ստացվել է 09.01.2019



Հայաստանի կենսաբ. հանդես, 2 (71), 2019

ՏԱՎԱՐԻ ՄՈՆԻԵԶԻՈԶԻ ԲՈՆԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ՏԱՎՈՒՇԻ ԵՎ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Յ.Զ. ՆԱՂԱՇՅԱՆ, Ա.Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ, Լ.Յ. ԳՐԻԳՈՐՅԱՆ,
Ս.Վ. ԵՐԻՔԵԿՅԱՆ, Վ.Լ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
naghov1950@rambler.ru

Տավարի մոնիեզիոզ հիվանդության նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ մշակելու նպատակով հանրապետության Տավուշի և Կոտայքի մարզերում մեկ տարվա կտրվածքով ուսումնասիրվել է արոտավայրերի, կենդանիների հանգստատեղերի և ջրելատեղերի հողը՝ տվյալ հիվանդության միջանկյալ տերերի՝ օրիբատիդային տզերով վարակվածության նկատմամբ: Օրիբատիդային տզերը հողում և բուսածածկում առավելապես հայտնաբերվում են գարնանը: Կենդանիների վարակվածությունը եղանակի տաքացմանը զուգընթաց մարում է:

Տավար – մոնիեզիոզ – հող – բույս – օրիբատիդային տիզ

С целью разработки профилактических мероприятий против мониезиоза крупного рогатого скота были проведены годовые исследования образцов почвы, взятых с пастбищ, мест отдыха и водопоя животных на предмет зараженности оribатидными клещами, являющимися промежуточными хозяевами возбудителя мониезиоза. Исследованиями были охвачены Тавушская и Котайская области РА. Оribатидные клещи обнаруживаются в почве и на растительном покрове преимущественно весной, поэтому случаи заражения животных мониезиозом регистрируются с приходом весны и постепенно идут на убыль параллельно с потеплением погоды.

Крупный рогатый скот – мониезиоз – почва – растение – оribатидный клещ

To develop preventive measures against moniesiosis of cattle, annual studies of soil samples were conducted, taken from pastures, resting and watering places of animals on the subject infectiousness by oribatid ticks, which are intermediate hosts of the pathogen of moniesiosis. The studies covered Tavush and Kotayk Marzes of the Republic of Armenia. Oribatid ticks were found in soil and on vegetation cover mainly in spring. Thus infections in animals by moniesiosis are registered with the advent of spring and gradually subsided in parallel with the warming weather.

Cattle – moniesiosis – soil – plant – oribatid tick

Հայաստանում տավարաբուծությունը համարվում է անասնաբուծության կարևորագույն ճյուղերից մեկը: Տավարի գլխաքանակի ավելացումը, ցեղային հատկանիշների բարելավումը, մթերատվության բարձրացումը և էկոլոգիապես անվտանգ մթերքների ստացումը հանդիսանում են անասնապահության զարգացման արդիական համալիր հիմնախնդիրները: Անասնապահության զարգացման ներկա փուլում սեփականության տարբեր ձևերի համատեղ գոյության պայմանները նպաստավոր են կենդանիների ինվազիոն - (մակաբուծային) հիվանդությունների բռնկման ռիսկի առաջացման համար:

Հայտնի է, որ Հայաստանի տարբեր մարզերի և հարևան երկրների կլիմայաաշխարհագրական առանձնահատկությունները ու անասնապահության վարման ձևերը նպաս-

տում են կենդանիների ճիճվային՝ հատկապես ցեստոդների կողմից հարուցվող մոնիեզիոզ հիվանդության տարածմանը [2-5,7,8]:

Այս հեմիկթոզը չնայած իր տարածվածությանը՝ մեր հանրապետությունում սակավ է ուսումնասիրված, անորոշ է հիվանդության գոտիականությունը, մարզերը և այլն:

Ելնելով վերոնշյալից՝ աշխատանքի նպատակն էր ուսումնասիրել Տավուշի և Կոտայքի մարզերի արոտավայրերի, ֆերմայամերձ տարածքների հողը մոնիեզիոզի նկատմամբ: Անհրաժեշտ էր նաև որոշել օրիբատիդային տզերի առկայությունը և դրանց մոնիեզիայի թրթուրներով (ցիստիցերկոիդներով) վարակվածության աստիճանը, ապա ստացված տվյալները օգտագործել տվյալ տարածքներում զարնանը տավարի մոնիեզիոզ բռնկումները կանխատեսելու նպատակով:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունները կատարվել են 2018 թ. գարուն, ամառ, աշուն եղանակներին, ինչպես նաև դեկտեմբերին Տավուշի և Կոտայքի մարզերում: Հետազոտության են ենթարկվել արոտավայրերի, կենդանիների հանգստատեղերի, ջրելատեղերի հողը և բուսածածկը: Հողի նմուշառումը կատարվել է մակերեսային շերտից:

Մինչև 20 սմ խորությունից վերցվել է 50 գ հողի մի քանի նմուշ, որոնք իրար խառնելով առանձնացվել է 100 գ քաշով միջին նմուշ: Խոտն առանձնացվել է արմատներով, որտեղ հիմնականում տեղակայված են լինում մոնիեզիայի հարուցիչ միջանկյալ տերերը՝ օրիբատիդային տզերը [1]:

Օրիբատիդային տզերը առանձնացվել են Տուգրենի սառքի միջոցով, իսկ նրանցում հարուցիչ ցիստիցերկոիդները դիտվել են մանրադիտակով [6]:

Արդյունքներ և քննարկում: 2018 թ. զարնանը վերցված 1մ² հողի և բուսածածկի նմուշներում՝ (թաքմ կամ նախորդ տարվա խոտ) արոտավայրերում, կենդանիների հանգստատեղերում և ջրելատեղերում հայտնաբերվել են միջինը համապատասխանաբար 135, 164 և 100 հատ օրիբատիդային տզեր: Առավելագույնը հայտնաբերվել է կենդանիների հանգստատեղերի հողում և խոտածածկում - 164 տիգ:

Ամռանը վերցված հողի և խոտի նմուշներում՝ արոտավայրերում, կենդանիների հանգստատեղերում և ջրելատեղերում հայտնաբերվել են 1 մ² տարածքում միջինը համապատասխանաբար 120, 145 և 133 հատ օրիբատիդային տզեր: Առավելագույնը կրկին հայտնաբերվել է կենդանիների հանգստատեղերի հողում և խոտածածկում, որը կազմել է 145 տիգ:

Նույն տարվա աշնանը վերցված հողի և խոտի նմուշներում՝ արոտավայրերում, կենդանիների հանգստատեղերում և ջրելատեղերում հայտնաբերվել են 1 մ² տարածքում միջինը համապատասխանաբար 112, 131 և 127 հատ օրիբատիդային տզեր: Առավելագույնը կրկին հայտնաբերվել է կենդանիների հանգստատեղերի հողում և խոտածածկում, որը կազմել է 127 տիգ (աղ. 1):

Աղյուսակ 1. Օրիբատիդային տզերով(հատ) առավելագույնը վարակված տարածքները ըստ տարվա եղանակների(նմուշ 1մ²) n = 10, M ± m

Հետազոտված տարածքների տիպը	Տարվա եղանակները		
	Գարուն	Ամառ	Աշուն
Բնական արոտավայրեր	135 ± 3,1	120 ± 1,25	112 ± 1,36
Կենդանիների հանգստատեղեր	164 ± 1,46	145 ± 1,98	131 ± 1,7
Ջրելատեղեր	130 ± 4,02	133 ± 3,9	127 ± 2,05

Այսպիսով, օրիբատիդային տզերով առավելագույնը վարակված էր կենդանիների հանգստատեղերի հողը և խոտածածկը, որն ըստ տարվա եղանակների տալիս էր չնչին տատանումներ:

Կարելի է եզրակացնել, որ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ կենդանիները երկար ժամանակ գտնվելով հանգստատեղերում արտազատում են հարուցիչ հասուն, ձվերով լեցուն հատվածներ, իսկ վերջիններս, ընկնելով գետնին, պատռվում են և ձվերը հասանելի են դառնում օրիբատիդային տզերի համար, որտեղ շարունակում են իրենց զարգացման հաջորդ փուլերը: Կենդանիների հետագա վարակման հավանականությունը ցածր է, քանի որ տավարը տրորելով տարածքը նպաստում է խոտածածկի աճի նվազմանը:

Մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ Հայաստանի պայմաններում օրիբատիդային տզերի առավելագույն քանակությունը հողում և խոտածածկում արձանագրվում է գարնանը, որը հավանաբար պայմանավորված է հողի բարձր խոնավությամբ, փխրունությամբ: Այս ամենը նպաստում է հողում թթվածնի ներթափանցմանը և տզերի համար անհրաժեշտ սննդանյութերի առկայությանը, որը հետագայում նվազում է՝ ջերմաստիճանի բարձացմանը զուգընթաց:

Արոտավայրերի, կենդանիների հանգստատեղերի, ջրելատեղերի հողի և խոտածածկի հետազոտությունը օրիբատիդային տզերի օրգանիզմում մոնիթինգի հարուցչի թթուցեթթվային ձևի՝ ցիտոհցերկոհիդների առկայության նկատմամբ բացահայտեց հետևյալ պատկերը:

Գարնանը արոտավայրերից, կենդանիների հանգստատեղերից, ջրելատեղերի հողից և խոտածածկից առանձնացված օրիբատիդային տզերի մոտ ցիտոհցերկոհիդների քանակությունը նմուշում համապատասխանաբար տատանվում էր հետևյալ քանակներով՝ 31, 21 և 29 հատ վարակված տիգ: Առավելագույնը վարակված էին բնական արոտավայրերից և ջրելատեղերից առանձնացված օրիբատիդային տզերը (աղ.2):

Աղյուսակ 2. Օրիբատիդային տզերի վարակվածությունը(հատ) մոնիթինգի հարուցչի ցիտոհցերկոհիդներով ըստ տարածքների և տարվա եղանակների (նմուշում 1մ²)
n = 10, M ± m

Հետազոտված տարածքների տիպը	Տարվա եղանակները		
	Գարուն	Ամառ	Աշուն
Բնական արոտավայրեր	31,5 ± 1,35	20 ± 1,7	11,2 ± 0,52
Կենդանիների հանգստատեղեր	21,3 ± 0,93	14 ± 1,25	10,9 ± 0,73
Ջրելատեղեր	29,2 ± 1,56	15,3 ± 1,25	9,3 ± 0,52

Ամռանը արոտավայրերից, կենդանիների հանգստատեղերից, ջրելատեղերի հողից և խոտածածկից առանձնացված օրիբատիդային տզերի մոտ ցիտոհցերկոհիդների քանակությունը նմուշում համապատասխանաբար տատանվում էր հետևյալ քանակներով՝ 20, 14 և 15 հատ վարակված տիգ: Ամռան ամիսներին ցիտոհցերկոհիդներով վարակված տզերի քանակների նվազումը հավանաբար պայմանավորված է 2018թ երկարատև տաք և չոր եղանակներով, որը ընկճում է խոտածածկի և դրանցում առկա օրիբատիդային տզերի աճը:

Աշնանը արոտավայրերից, կենդանիների հանգստատեղերից, ջրելատեղերի հողից և խոտածածկից առանձնացված օրիբատիդային տզերի մոտ ցիտոհցերկոհիդների քանակությունը նմուշում համապատասխանաբար տատանվում էր հետևյալ քանակներով՝ 11, 10 և 9 հատ վարակված տիգ: Վարակված տզերի քանակների հետագա նվազումը աշնան ամիսներին ևս պայմանավորված էր՝ աշնան տաք եղանակների և տեղումների նվազագույն քանակներով:

Այսպիսով, մեկ տարվա կտրվածքով կատարված հետազոտությունների արդյունքում կարելի է կանխատեսել, որ գարնան ամիսներին հետազոտված մարզերի արոտավայրերի, կենդանիների հանգստատեղերի, ջրելատեղերի հողում և խոտածածկում օրիբատիդային տզերի մեծ քանակները կարող են նպաստել տավարի, հատկապես դրանց մատղաշի մոնիթինգի հիվանդության վարակմանը: Եղանակի տաքացմանը և չորային եղանակին զուգընթաց հիվանդությունը նվազում է, և ըստ ստացված արդյունքի՝ տվյալ տարածքներում անհրաժեշտ է իրականացել մոնիթինգի նկատմամբ բուժական խարզելիչ միջոցառումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նաղաշյան Յ.Զ. Կենդանիների ինվազիոն հիվանդություններ: Երևան, էջ 21-23, 2006:
2. Նաղաշյան Յ.Զ., Շերբակով Օ.Վ. Հողային անողնաշարավորները որպես գյուղատնտեսական կենդանիների մակաբույծ որդերի միջանկյալ տերերը Հայաստանում: Հայաստանի կենսաբ. հանդես, 1, էջ 68-72, 2010:

3. *Белиев С.М.* Распространение возбудителей мониезиоза овец на пастбищах разного типа на юго-востоке Северного Кавказа. Матер.-лы докл. науч. конф. Всерос. о-ва гельминтол. РАН “Теория и практика борьбы с паразитарными болезнями”. М., с. 55-57, 2011.
4. *Никитин В.Ф., Дудка Н.С.* Методические положения по профилактике основных трематодозов крупного рогатого скота при пастбищном содержании. М., АЗ плюс, с. 18-28, 2012.
5. *Потемкина В.А.* Мониезиозы жвачных животных. М., 263 с., 1965.
6. *Шумакович Е.Е., Сосипатров Г.В.* Оценка пастбищ при мониезиозе / В кн. Гельминтологическая оценка пастбищ. М., с. 95-113, 1973.
7. *Mazyad S.A., El Garhy MF.* Laboratory and field studies on oribatid mites as intermediate host of *Moniezia expansa* infecting Egyptian sheep J. Egypt. Soc. Parasitol. Apr; 34, 1, 305-14, 2004.
8. *Xiao L., Herd RP.* Infectivity of *Moniezia benedeni* and *Moniezia expansa* to oribatid mites from Ohio and Georgia. Vet. Parasitol. Dec; 45, 1-2, 101-10, 1992.

Ստացվել է 06.02.2019



Հայաստանիկենսաբ. հանդես, 2 (71), 2019

**ՊՐՆՁՈՎ ԵՎ ՄՈԼԻԲԴԵՆՈՎ ԱՐՏՈՏՎԱԾ ՀՈՂԵՐՈՒՄ ԱՃՈՂ
ARTEMISIA VULGARIS ԵՎ MEDICAGO COERULEA
ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՖԻՏՈԷՔՍՏՐԱԿՑԻԱՅԻ ՆԵՐՈՒԺԻ
ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ**

Կ.Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

Երևանի պետական լսարան,
kghazaryan@ysu.am

Ուսումնասիրվել են *Artemisia vulgaris* և *Medicago coerulea* բուսատեսակների պղնձի, մոլիբդենի կուտակման ունակությունը, ֆիտոէքստրակցիայի ներուժը և բացահայտվել են NH_4NO_3 -ի ու EDTA-ի ազդեցությունները պղնձի և մոլիբդենի կուտակման ունակության փոփոխության վրա: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ պղնձով աղտոտված հողերի մաքրման նպատակով *Artemisia vulgaris* և *Medicago coerulea* բուսատեսակների աճեցման ժամանակ ֆիտոէքստրակցիայի գործընթացի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է օգտագործել խելատացնող նյութեր, իսկ մոլիբդենի դեպքում՝ լրացուցիչ խելատացնող նյութերի օգտագործումը նպատակահարմար չէ:

Հողերի աղտոտում – ծանր մետաղներ – ֆիտոռեմեդիացիա – ֆիտոէքստրակցիա

Исследовались способность растений *Artemisia vulgaris* и *Medicago coerulea* накапливать медь и молибден, их фитоэкстракционный потенциал, а также было выявлено влияние NH_4NO_3 и EDTA на изменение способности накапливать медь и молибден. Результаты исследования показывают, что при выращивании *Artemisia vulgaris* и *Medicago coerulea* для очистки почвы, загрязненной медью, для повышения эффективности фитоэкстракции необходимо использовать хелатирующие вещества, а в случае молибдена использование дополнительных хелатирующих веществ не рекомендуется.

Загрязнение почвы – тяжелые металлы – фиторемедиация – фитоэкстракция

The ability of *Artemisia vulgaris* and *Medicago coerulea* plant species to accumulate copper and molybdenum as well as their phytoextraction potential were studied. The influence of NH_4NO_3 and EDTA on changes of copper and molybdenum accumulation ability was also detected. Study results indicate that during the growth of *Artemisia vulgaris* and *Medicago coerulea* to clean the soils polluted by copper for the enhancement of phytoextraction effectiveness it is necessary to use chelating agents, but in the case of molybdenum the use of additional chelating agents is not advisable.

Soil pollution – heavy metals – phytoremediation – phytoextraction

Ներկայումս հողերի աղտոտումը ծանր մետաղներով դարձել է կարևորագույն էկոլոգիական հիմնախնդիրներից մեկը [16]: Հողի մեջ ծանր մետաղների բարձր խտություններով պարունակությունը կարող է խիստ թունավոր ազդեցություն թողնել ինչպես էկոհամակարգի տարբեր բաղադրիչների, այնպես էլ ամբողջ էկոհամակարգի վրա [19, 22]: Այն կարող է նաև վնաս հասցնել մարդկանց առողջությանն ուղղակիորեն՝

օդում պարունակվող աղտոտիչների շնչառման կամ ծանր մետաղներով աղտոտված խմելու ջրի միջոցով, կամ էլ միջնորդավորված կերպով՝ սնման շղթայի աղտոտման հետևանքով [1]: Հանքարդյունաբերությունը հանդիսանում է ծանր մետաղներով շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը [2, 20]: Հաշվի առնելով այն փաստը, որ հանքարդյունաբերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արդյունաբերության հիմնական ճյուղերից մեկը, այս հիմնախնդիրը խիստ արդիական է մեր երկրում [8]:

Հողերի վերականգնումը (ռեմեդիացիան) կարող է նվազեցնել շրջակա միջավայրի վրա ծանր մետաղների հևարավոր բացասական ազդեցությունը և պահպանել հողը՝ որպես կարևոր բնական պաշար: Աղտոտված հողերի ռեմեդիացիայի համար տարբեր գիտնականների կողմից մշակվել են մի շարք մեթոդներ, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի՝ ավանդական, տեխնիկական, ֆիզիկական և քիմիական, օրինակ՝ հողի փոխարինումը կամ լվացումը, ջերմային դետրեքցիան, թթվային լուծամզումը և նոսրացումը [14, 23], և ժամանակակից մեթոդներ, օրինակ՝ բույսերի միջոցով, այն է՝ ֆիտոռեմեդիացիայի մեթոդները [4, 5, 6, 13]: Աղտոտված հողերի ռեմեդիացիայի ժամանակակից մեթոդներն առավել ընդունելի են հասարակության կողմից, անվտանգ են շրջակա միջավայրի համար և ֆինանսական մեծ ծախսեր չեն պահանջում [7]:

Ֆիտոռեմեդիացիան բնորոշվում է որպես բույսերի օգտագործման միջոցով շրջակա միջավայրից աղտոտիչների հեռացման կամ դրանք անվնաս դարձնելու մեթոդ [11, 15]: Տարբերվում է ֆիտոռեմեդիացիայի մի բանի եղանակ՝ ֆիտոէքստրակցիա (բույսերի կողմից աղտոտիչների կլանում և կենսազանգվածի հետ միասին աղտոտված տարածքից հեռացում), ֆիտոստաբիլիզացիա (բույսերի կողմից աղտոտիչների իմոբիլիզացիա), ֆիտոդեգրադացիա (բույսերի կողմից աղտոտիչների կլանում և քայքայում), ֆիտովոլատիլիզացիա (բույսերի մակերեսից գոլորշիացման միջոցով աղտոտիչների հեռացում) և ռիզոֆիտրացիա (բույսերի արմատների կողմից աղտոտիչների աբսորբցիա կամ ադսորբցիա):

Ֆիտոէքստրակցիայի գործընթացի ժամանակ աղտոտված հողերից ծանր մետաղների կլանման արդյունավետությունը սահմանափակվում է մի շարք գործոններով, մասնավորապես բույսերի համար տվյալ մետաղների կենսամատչելիությունով [17]: Խելատացնող նյութերի կիրառումը կարող է բարձրացնել ծանր մետաղների կենսամատչելիության աստիճանը և նպաստել բույսերի կողմից դրանց կլանմանը և վերգետնյա օրգաններ տեղափոխմանը [12, 17, 18]: Այս քիմիական հավելումներն առաջացնում են մետաղների ջրալուծ կոմպլեքսներ՝ դրանց դարձնելով ավելի կենսամատչելի արմատների կողմից կլանման համար, և ճանաչվել են որպես հողից մետաղների հեռացման լավ միջոց [21]:

Հաշվի առնելով այս ամենը, հետազոտության նպատակներն են՝ (1) բացահայտել *Artemisia vulgaris* և *Medicago coerulea* բուսատեսակների պոլինձ, մոլիբդեն կուտակման ունակությունը, ֆիտոէքստրակցիայի ներուժը և (2) NH_4NO_3 ու EDTA-ի ազդեցությունները *Artemisia vulgaris* և *Medicago coerulea* բուսատեսակների կողմից պոլինձի և մոլիբդենի կուտակման ունակության փոփոխության վրա:

Նյութ և մեթոդ: Ֆիտոռեմեդիացիայի համար նախատեսված հողերը բերվել են Հայաստանի հարավ-արևելյան շրջանից (Չանգեզուրի պոլինձամոլիբդենային կոմբինատի շրջակայքից): Դրանք պատկանում են լեռնանտառային դարչնագույն հողերի տիպին:

Այս տարածքում մեր կողմից իրականացված նախկին ուսումնասիրություններից պարզվել էր, որ հողերը աղտոտված էին որոշ ծանր մետաղներով, մասնավորապես պոլինձի և մոլիբդենով [9]:

Ուսումնասիրությունների համար նախատեսված հողանմուշները չորացվել են սենյակային պայմաններում (20–22°C), տրորվել սանդղում և անցկացվել 1 մմ մաղով: Մետաղների վերլուծության համար նախատեսված հողերի նմուշները պահվել են սառնարանում: Ծանր մետաղների ընդհանուր պարունակությունը որոշելու համար հողը տրորվել է սանդի մեջ և անցկացվել 0,15 մմ մաղով: Պոլինձի և մոլիբդենի ընդհանուր պարունակության որոշման համար հողի նմուշը տարրալուծվել է $\text{HNO}_3 + \text{HClO}_4 + \text{HF}$ (5:1:1, v:v:v) թթվային խառնուրդում (2 ժ, 180°C) [3]: Ծանր մետաղների պարունակությունը որոշվել է ատոմային աբսորբցիոն սպեկտրաչափային մեթոդով՝ ԱԱՍ սարքի միջոցով (Atomic-absorption spectrometer PG990):

Հողանմուշներում կենսամատչելի պոլինձի և մոլիբդենի որոշման համար 1 գ մանրացված հողի վրա ավելացվել 40 մլ 0,11 մոլ/լ բացախաթթու, պահվել է 16ժ՝ 20–22°C պայմաններում, ապա ֆիլտրվել և ֆիլտրատում որոշվել է պոլինձի ու մոլիբդենի պարունակությունը ԱԱՍ սարքի միջոցով [10]:

Ex situ փորձերն իրականացվել են 2016թ. ապրիլ-հունիս ամիսներին՝ 12 լիտր ծավալով անոթների մեջ: *Artemisia vulgaris* և *Medicago coerulea* բուսատեսակներն աճեցվել են չոր տարբեր սխեմաներով՝ երեքական օրինակով:

Չորս սխեմաներն են. 1) չաղտոտված հող (ստուգիչ), 2) աղտոտված հող, 3) աղտոտված հող + NH_4NO_3 (0.1 գ/կգ հող), 4) աղտոտված հող + NH_4NO_3 (0.1 գ/կգ հող) + EDTA (5 մմոլ/կգ հող): NH_4NO_3 և EDTA բույսերին տրվել են հունիսի առաջին կեսին, որից երկու շաբաթ անց իրականացվել է բույսերի հավաքը: Ամբողջական բույսերը լվացվել են հոսող ջրի տակ, ապա ևս երկու անգամ՝ թորած ջրով: Լվացված բույսերը բաժանվել են վերգետնյա ու ստորգետնյա մասերի, կշռվել են, չորացվել (70°C) մինչև հաստատուն քաշի գալը և կրկին կշռվել: Չորացված բույսերը մանրացվել են և տարրալուծվել $\text{HNO}_3 + \text{HClO}_4$ (4:1, v:v) թթվային խառնուրդում (200°C , 150°C) [24]:

Պղնձի ու մոլիբդենի պարունակությունը որոշվել է ԱԱՍ սարքի միջոցով:

Artemisia vulgaris և *Medicago coerulea* բուսատեսակների ֆիտոէքստրակցիայի ներուժը գնահատվել է արմատների կենսակուտակման ցուցանիշի ($\text{BCF}_{\text{արմատ}}$) և տրանսլոկացիայի ցուցանիշի (TF) միջոցով [8].

Բույսերի արմատների կողմից պղնձի և մոլիբդենի կուտակման ունակությունը գնահատվել է $\text{BCF}_{\text{արմատ}}$ միջոցով:

$$\text{BCF}_{\text{արմատ}} = \text{Me}_{\text{արմատ}} / \text{Me}_{\text{հող}} \quad (1),$$

որտեղ $\text{Me}_{\text{արմատ}}$ պղնձի և մոլիբդենի պարունակությունն է բույսերի արմատներում, իսկ $\text{Me}_{\text{հող}}$ կենսամատչելի պղնձի և մոլիբդենի պարունակությունն է հողում:

TF որոշվել է հետևյալ բանաձևով.

$$\text{TF} = \text{Me}_{\text{վերգ}} / \text{Me}_{\text{արմատ}} \quad (2),$$

որտեղ $\text{Me}_{\text{վերգ}}$ բույսերի վերգետնյա մասում պղնձի և մոլիբդենի պարունակությունն է, իսկ $\text{Me}_{\text{արմատ}}$ պղնձի և մոլիբդենի պարունակությունն է բույսերի արմատներում:

Եթե $\text{BCF}_{\text{արմատ}}$ արժեքը մեծ է մեկից, ապա կարելի է ասել, որ բույսն օժտված է ծանր մետաղներ կուտակելու ներուժով և կարող է օգտագործվել ֆիտոէքստրակցիայի նպատակով, իսկ եթե $\text{BCF}_{\text{արմատ}}$ արժեքը հավասար կամ փոքր է մեկից, ապա բույսը պարզապես աքսորվում է ծանր մետաղները: TF մեկից մեծ արժեքը խոսում է ֆիտոէքստրակցիայի ներուժի մասին, իսկ մեկին հավասար կամ փոքր արժեքի դեպքում այնքան էլ նպատակահարմար չէ այդ բույսերը ֆիտոէքստրակցիայի նպատակով օգտագործման համար:


Արդյունքներ և քննարկում: Ինչպես նշվեց, ex situ պայմաններում ֆիտոռեմեդիացիայի համար նախատեսված աղտոտված հողերը բերվել էր Չանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատի ֆաբրիկայից մոտ 300 մ հեռավորությունից (N $39^\circ 09,241'$; E $46^\circ 08,520'$), իսկ ստուգիչ հողանուշը՝ մոտ 4 կմ հեռավորությունից (N $39^\circ 13,018'$; E $46^\circ 13,960'$): Հողանուշների որոշ ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրությունների արդյունքները ներկայացված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1. Աղտոտված և ստուգիչ հողանուշների քիմիական ֆիզիկաքիմիական բնութագիրը (միջին $\pm$ SD)

Հողի բնութագիրը	Աղտոտված հող	Ստուգիչ հող
pH	$7,9 \pm 0,3$	$7,8 \pm 0,1$
Հումուս, %	$3,61 \pm 0,40$	$6,48 \pm 0,38$
Ավազ, %	40 ± 4	31 ± 4
Տիղմ, %	39 ± 3	39 ± 4
Կավ, %	21 ± 1	30 ± 3
$\text{Cu}_{\text{ընդ}}$, մգ/կգ	$3480,3 \pm 209,8$	$71,6 \pm 11,0$
$\text{Cu}_{\text{կենսամատչելի}}$, մգ/կգ	$494,4 \pm 24,1$	$3,2 \pm 0,5$
$\text{Mo}_{\text{ընդ}}$, մգ/կգ	$1526,5 \pm 97,2$	$9,9 \pm 1,2$
$\text{Mo}_{\text{կենսամատչելի}}$, մգ/կգ	հետքեր	հետքեր

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ֆիտոռեմեդիացիայի համար նախատեսված հողերում $\text{Cu}_{\text{ընդ}}$ պարունակությունը ստուգիչի համեմատ բարձր է 48,6 անգամ, իսկ $\text{Mo}_{\text{ընդ}}$ ՝ 154,2 անգամ: Այս փաստը խոսում է այն մասին, որ ուսումնասիրվող հողերն աղտոտված են պղնձով և մոլիբդենով: Սա ուղղակիորեն պայմանավորված է մարդու տնտեսական գործունեությամբ, մասնավորապես՝ հանքարդյունաբերությամբ: Ուսումնասիրված հողանուշներում բարձր է եղել նաև $\text{Cu}_{\text{կենսամատչելի}}$ պարունակությունը. այն գերազանցել է ստուգիչին 154,5 անգամ: Իսկ $\text{Mo}_{\text{կենսամատչելի}}$ երկու հողանուշներում էլ հայտնաբերվել է հետքերի ձևով, որը հավանաբար պայմանավորված է եղել մոլիբդենի քիչ շարժունակությամբ:

Artemisia vulgaris և *Medicago coerulea* բուսատեսակները չորս սխեմաներով երեք ամիս աճեցնելուց հետո հավաքվել և որոշվել են ինչպես դրանց վերգետնյա մասի ու արմատի թաց և չոր զանգվածները (նկ. 1, 2), այնպես էլ պղնձի, մոլիբդենի պարունակությունները (աղ. 2):



Նկ. 2. Չորս սխեմաներով աճեցված *Medicago coerulea*-ի թաց և չոր զանգվածները (գրամ)

Աղյուսակ 2. Բույսերի չոր զանգվածում պղնձի և մոլիբդենի պարունակությունը

Բույսի անվանումը	Ստուգիչ հող		Աղտոտված հող		Աղտոտված հող + պարարտանյութ (NH ₄ NO ₃ - 0,1 գ/կգ հող)		Աղտոտված հող + պարարտանյութ + EDTA (NH ₄ NO ₃ - 0,1 գ/կգ հող, EDTA 5 մմոլ/կգ հող)	
	Վերգետնյա մաս	արմատ	Վերգետնյա մաս	արմատ	Վերգետնյա մաս	արմատ	Վերգետնյա մաս	արմատ
Cu մգ/կգ								
<i>Artemisia vulgaris</i>	10,1	22,8	30,4	337,5	36,75	108,65	361,9	212,87
<i>Medicago coerulea</i>	13,2	13,2	68,9	168,5	48,6	264,5	1888,33	456,33
Mo մգ/կգ								
<i>Artemisia vulgaris</i>	հետքեր	48	159	308	159	321	207	135
<i>Medicago coerulea</i>	49	հետքեր	234	165	127	245	239	387

Հարկ է նշել, որ ստուգիչում աճեցված *Artemisia vulgaris*-ի միայն արմատներում է հայտնաբերվել մոլիբդեն, իսկ *Medicago coerulea*-ի մոտ՝ միայն վերգետնյա մասում: Բույսերի կողմից մոլիբդենի կուտակման ինտենսիվության վրա կիրառվող NH₄NO₃ և EDTA եական ազդեցություններ չեն թողել: Սա խոսում է այն մասին, որ նշված միացությունները չեն ավելացնում մոլիբդենի մատչելիության աստիճանը: Եական փոփոխություններ չի նկատվել նաև պղնձի կուտակման գործընթացում, երբ կիրառվել է միայն NH₄NO₃: Բույսերի կողմից պղնձի կուտակման և վերգետնյա օրգաններ փոխադրման վրա առավել մեծ ազդեցություն է թողել NH₄NO₃ և EDTA համատեղ օգտագործումը: Մասնավորապես, *Artemisia vulgaris*-ի մոտ արմատներում պղնձի պարունակությունը մի փոքր նվազել է, բայց վերգետնյա մասում այն ավելացել է շուրջ 12 անգամ, իսկ *Medicago coerulea*-ի մոտ արմատներում պղնձի պարունակությունն ավելացել է 2,7 անգամ, վերգետնյա մասում՝ 27,4 անգամ: Սա հիմնականում պայմանա-

վորված է EDTA-ի խելատացնող հատկությամբ, որի միջոցով բույսերի համար բարձրանում է պղնձի մատչելիությունը: Հարկ է նշել, որ փորձի երկրորդ և երրորդ սխեմաներում պղինձը հիմնականում կուտակվել է արմատներում, իսկ EDTA-ի խելատացնող ազդեցության հետևանքով բարձրացել է նաև պղնձի շարժունությունը բույսի մեջ և վերգետնյա մասում ավելի շատ պղինձ է կուտակվել: Այս փաստը խոսում է այն մասին, որ EDTA-ն էականորեն բարձրացնում է բույսերի ֆիտոէքստրակցիայի ունակությունը:

Artemisia vulgaris և *Medicago coerulea* բուսատեսակների ֆիտոէքստրակցիայի ներուժի բացահայտման համար որոշվել է BCF_{արմատ} և TF (աղ. 3):

Աղյուսակ 3. *Artemisia vulgaris* և *Medicago coerulea* բուսատեսակների BCF_{արմատ} ու TF արժեքները՝ ըստ պղնձի

Բույսի անվանումը	Աղտոտված հող		Աղտոտված հող + պարարտանյութ(NH ₄ NO ₃ – 0,1գ/կգհող)	Աղտոտված հող + պարարտանյութ + EDTA (NH ₄ NO ₃ - 0,1գ/կգհող, EDTA 5մմոլ/կգհող)		
	BCF _{արմատ}	TF	BCF _{արմատ}	TF	BCF _{արմատ}	TF
<i>Artemisia vulgaris</i>	0,68	0,09	0,22	0,34	0,43	1,7
<i>Medicago coerulea</i>	0,34	0,41	0,53	0,18	0,92	4,14

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ աղտոտված հողում (սխեմա 2) *Artemisiavulgaris*-ի մոտ նկատվել է արմատներում ծանր մետաղներ կուտակվելու ավելի մեծ ունակություն, սակայն *Medicagocoerulea*-ի մոտ ավելի լավ է արտահայտված դեպի վերգետնյա օրգաններ պղնձի փոխադրման ունակությունը: NH₄NO₃ կիրառման ժամանակ (սխեմա 3) *Artemisiavulgaris*-ի մոտ նկատվել է BCF_{արմատ} արժեքը, որը բերել է TF արժեքի մեծացմանը, բայց իրականում բույսի վերգետնյա մասում պղնձի պարունակությունը էական փոփոխության չի ենթարկվել: Իսկ *Medicago coerulea*-ի դեպքում նկատվել է BCF_{արմատ} արժեքի ավելացում և TF արժեքի նվազում: Իսկ արդեն NH₄NO₃ և EDTA համատեղ օգտագործման ժամանակ (սխեմա 4) *Artemisia vulgaris*-ի մոտ կտրուկ մեծացել է պղինձը վերգետնյա օրգաններ փոխադրելու ունակությունը, իսկ *Medicago coerulea*-ի մոտ նկատվել է պղինձի ինչպես արմատներում կուտակելու ունակության, այնպես էլ այն վերգետնյա օրգաններ փոխադրելու ունակության կտրուկ բարձրացում:

Ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է ասել, որ *Artemisia vulgaris*-ը համեմատաբար ավելի լավ է հարմարվել պղնձով ու մոլիբդենով աղտոտված հողերում աճելուն և ավելի քիչ է նկատվել աճի ինտենսիվության նվազում: Աճի ինտենսիվությունը մասնակիորեն կարելի է վերականգնել NH₄NO₃-ի կիրառման միջոցով: Սակայն այս երկու դեպքերում էլ պղինձն ինտենսիվ կուտակվել է արմատներում և շատ քիչ բանակությամբ է տեղափոխվել վերգետնյա օրգաններ, որով և նվազել է այդ բույսերի ֆիտոէքստրակցիայի նպատակով կիրառման արդյունավետությունը: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է NH₄NO₃-ի հետ միաժամանակ կիրառել նաև EDTA, որը կտրուկ բարձրացնում է բույսերի ֆիտոէքստրակցիայի նպատակով կիրառման արդյունավետությունը:

Այսպիսով, մոլիբդենով աղտոտված հողերի ֆիտոէքստրակցիայի նպատակով *Artemisia vulgaris* և *Medicago coerulea* բուսատեսակների աճեցման ժամանակ նպատակահարմար չէ լրացուցիչ խելատացնող նյութերի (NH₄NO₃, EDTA) օգտագործումը, իսկ պղնձի դեպքում՝ ֆիտոէքստրակցիայի գործընթացի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է օգտագործել խելատացնող նյութեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Alexander A.K., Daniel V.D.L. Chemical and biological parameters as tools to evaluate and improve heavy metal phytoremediation. Biosci. Rep., 20, 4, pp. 239-258, 2000.
2. Armienta M.A., Talavera O., Morton O., Barrera M. Geochemistry of metals from mine tailings in Taxco, Mexico. Bull Environ Contam Toxicol, 71, 2, pp. 387-393, 2003.
3. Baker D. E., Amacher M. C. Nickel, Copper, Zinc, and Cadmium. In: A. L. Page, R. H. Miller, D. R. Keeney (Eds.), Methods of Soil Analysis. Part 2: Chemical and Microbiological Properties, Agronomy Monograph. Wisconsin, Madison: Agronomy Society of America and Soil Science Society of America, pp. 323-336, 1982.

4. Bolan N.S., Park J.H., Robinson B., Naidu R., Huh K.Y. Phytostabilization: a green approach to contaminant containment. *Adv Agron*, 112, pp. 145-204, 2011.
5. Clemente R., Walker D.J., Pardo T., Martínez-Fernández D., Bernal M.P. The use of halophytic plant species and organic amendments for the remediation of a trace elements contaminated soil under semi-arid conditions. *J Hazard Mater*, 223-224, pp. 63-71, 2012.
6. Dickinson N.M., Baker A.J.M., Doronila A., Laidlaw S., Reeves R.D. Phytoremediation of inorganics: realism and synergies. *Int J Phytorem*, 11, pp. 97-114, 2009.
7. Garbisa C., Alkorta I. Phytoextraction: a cost-effective plant-based technology for the removal of metals from the environment. *Biores Technol*, 77, pp. 229-236, 2001.
8. Ghazaryan K., Movsesyan H., Khachatryan H., Ghazaryan N., Minkina T., Sushkova S., Mandzhieva S., Rajput V. Copper phytoextraction and phytostabilization potential of wild plant species growing in the mine polluted areas of Armenia. *Geochem: Explor Env Anal*, 2018, <https://doi.org/10.1144/geochem2018-035>
9. Ghazaryan, K., Movsesyan, H., Khachatryan, H., & Ghazaryan, N. Geochemistry of potentially toxic trace elements in soils of mining area: a case study from Zangezur Copper and Molybdenum Combine, Armenia. *Bull Environ. Contam Toxicol*, 101, 6, pp. 732-737, 2018, <https://doi.org/10.1007/s00128-018-2443-0>
10. He Q., Ren Y., Mohamed I., Ali M., Hassan W., Zeng F. Assessment of trace and heavy metal distribution by four sequential extraction procedures in a contaminated soil. *Soil Water Res*, 8, 2, pp. 71-76, 2013.
11. Lasat M. M. Phytoextraction of toxic metals: a review of biological mechanisms. *J. Environ Qual.*, 31, pp. 109-120, 2002.
12. Lombi E., Zhao F.J., Dunham S.J., McGrath S.P. Phytoremediation of heavy metal-contaminated soils: natural hyperaccumulation versus chemically enhanced phytoextraction. *J. Environ. Qual.*, 30, pp. 1919-1926, 2001.
13. Mendez M.O., Maier R.M. Phytoremediation of mine tailings in temperate and arid environments. *Rev Environ Sci Biotechnol*, 7, pp. 47-59, 2008.
14. Meuser H. Soil remediation and rehabilitation, Springer, 2013. DOI 10.1007/978-94-007-5751-6
15. Niu Z.X., Sun L.N., Sun T.H., Wang H. Evaluation of phytoextracting cadmium and lead by sunflower, ricinus, alfalfa and mustard in hydroponic culture. *J Environ Sci*, 19, pp. 961-967, 2007.
16. Peng J.F., Song Y.H., Yuan P., Cui X.Y., Qiu G.L. The remediation of heavy metals contaminated sediment. *J Hazard Mater*, 161, 2-3, pp. 633-640, 2009.
17. Quartacci M.F., Argilla A., Baker A.J.M., Navari-Izzo F. Phytoextraction of metals from a multiply contaminated soil by Indian mustard. *Chemosphere*, 63, pp. 918-925, 2006.
18. Quartacci M.F., Irtelli B., Baker A.J.M., Navari-Izzo F. The use of NTA and EDDS for enhanced phytoextraction of metals from a multiply contaminated soil by Brassica carinata. *Chemosphere*, 68, pp. 1920-1928, 2007.
19. Rajput V.D., Minkina T.M., Behal A., Sushkova S.N., Mandzhieva S., Singh R., Gorovtsov A., Tsitsuashvili V.S., Purvis W.O., Ghazaryan K.A., Movsesyan H.S. Effects of zinc-oxide nanoparticles on soil, plants, animals and soil organisms: a review. *Environmental Nanotechnology, Monitoring & Management*, 9, pp. 76-84, 2018. <https://doi.org/10.1016/j.enmm.2017.12.006>
20. Romero F.M., Armienta M.A., González-Hernández G. Solid-phase control on the mobility of potentially toxic elements in an abandoned lead/zinc mine tailings impoundment, Taxco, Mexico *Appl Geochem*, 22, 1, pp. 109-127, 2007.
21. Schmidt U. Enhancing phytoextraction: the effect of chemical soil manipulation on mobility, plant accumulation, and leaching of heavy metals. *J Environ Qual*, 32, pp. 1939-1954, 2003.
22. Vaxevanidou K., Papassiopi N., Paspaliaris I. Removal of heavy metals and arsenic from contaminated soils using bioremediation and chelant extraction techniques. *Chemosphere*, 70, pp. 1329-1337, 2008.
23. Yao Z.T., Li J.H., Xie H.H., Yu C.H. Review on remediation technologies of soil contaminated by heavy metals. *Proc Environ Sci*, 16, pp. 722-729, 2012.
24. Zemberyová M., Barteková J., Hagarová I. The utilization of modified BCR three-step sequential extraction procedure for the fractionation of Cd, Cr, Cu, Ni, Pb and Zn in soil reference materials of different origins. *Talanta*, 70, pp. 973-978, 2006.

Unuquql t 26.02.2019



Биол. журн. Армении, 2 (71), 2019

О ВОЗМОЖНЫХ МЕХАНИЗМАХ ИЗМЕНЕНИЯ РАЗМЕРОВ ЭРИТРОЦИТОВ ПРИ ВОЗДЕЙСТВИИ ИОНИЗИРУЮЩЕГО ИЗЛУЧЕНИЯ

Г.П. САРКИСЯН, Н.С. БАГДАСАРЯН, А.Г. САРКИСЯН

Институт химической физики им. А.Б. Налбандяна НАН РА,
hrachya_sargsyan@mail.ru

Обсуждаются возможные механизмы изменений морфофункциональных показателей эритроцитов в раннем периоде после радиационного поражения в диапазоне доз от 50 до 1000 Р. Из анализа данных в научной литературе и результатов собственных исследований установлено, что наиболее вероятным механизмом изменения размеров эритроцитов является отклонение кинетики массопереноса через биологические мембраны от нормы, которое является следствием изменения проницаемости мембраны. Причиной изменения проницаемости мембраны эритроцита являются структурные изменения внутри нее на молекулярном и надмолекулярном уровнях. Также отмечена дозовая зависимость наблюдаемых размерных сдвигов эритроцитов по сравнению с нормой.

Морфофункциональные показатели – радиационное поражение – проницаемость мембран

Ըննարկվում են 50-ից մինչև 1000 Ռ դոզայով ճառագայթային ախտահարումից հետո վաղ շրջանում էրիթրոցիտների ձևաբանական և ֆունկցիոնալ ցուցանիշների փոփոխությունների հնարավոր մեխանիզմները: Գիտական գրականական տվյալների և սեփական հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա պարզաբանվել է, որ էրիթրոցիտների չափերի փոփոխության ամենահավանական մեխանիզմ է կենսաբանական թաղանթներով կոլաբատիվա-նակության կինետիկայի շեղումը նորմայից, ինչը հետևանք է կենսաթաղանթի թափանցելիության փոփոխության: Թափանցելիության փոփոխության պատճառ են թաղանթներում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունները մոլեկուլային և վերամոլեկուլային մակարդակում: Նշված է նաև էրիթրոցիտների մոտ դիտվող նորմայի համեմատությամբ չափային շեղումների դոզային կախվածությունը:

Ձևաբանական և ֆունկցիոնալ ցուցանիշներ – ճառագայթային ախտահարում – թաղանթի թափանցելիություն

